

1898-

2.001100

29

ԱՆԱՐԱՏ ՅԳՈՒԹԵԱՆ

ԵԳԵԿՅՈՒԹԻՒՆ

2001

2
Ժ-25

41050-

2012

Ա Ե Ր

քարոզեսութ

գիւաչելեաւն

Քրիստոս:

Ա. Կորնթ. Ա. 25:

—
—
—

Հոգեւոր

աշխատասիրութիւնն

ԱՅԱԿԱՆ ԳԻ
ԳՈՅ ԲԻBLIOTEC

* ZUUR- յԱ. ՀՀ
Ա. ՄԱՏԻԿԱՆԻ ԱՆԱՀԻ
Ա. ՍԱՇՎԻԼԻ ԱՆԱՀԻ

24780-6

Խ Օ Ս Ք

Մարդկան բարոյիցը նկատմամբ էր+Երան-
ունեցած մեծ աղբեցութեան վրայ:

Մարդուս նուիրական պարագ է՝
չէ թէ մինակ եղօրը չարիք չընել,
հապա միանդամայն ձեռքէն եկածին
չափ բարիք ալ ընել:

Ամէն հաւատացեալ ուզդափառ-
քրիստոնեայ՝ մատաղ հասակէն սոր-
ված է, որ առաջին կարգի բարե-
գործութեանց մէկն ալ՝ տգէտներն
ուսուցանեն է. եւ գլխաւորաբար
ան տգէտները՝ որոնք հաւատքի եւ
անոր գործնական հրահանգներուն
նկատմամբ սորվելու կարօտ են:

Ստոյգ է, ամէն եռանդնոտ հաւ-
ատացեալ քրիստոնեայ՝ իր կարողու-
թեանը համեմատ՝ բարի օրինակա եւ
խրատով զամէնքը բարեպաշտութեան
եւ Աստուծոյ ծառայութեան յորդո-

բելով՝ կրնայ աս կերպ ազնուական
բարեգործութեան ետեւէ ըլլալ։ Առ-
կայն մարդուս բնութեան հարին է,
որ թէ կեանքը տեւողութեամբ շա-
փաւորած ըլլայ, եւ թէ իր ներկայու-
թիւնը շատ տեղ չտարածուի։ Առիէ
ալ զատ՝ չի կրնար ըլլալ, որ ամէն
եռանդնոտ հաւատացեալ քրիստո-
նեայ՝ այնչափ ձիբք եւ ուսում ունե-
նայ՝ որչափ որ ուրիշները սորվեցրնե-
լու եւ բարեպաշտութեան բերելու
համար հարկաւոր է։

Սակայն աստուածային տեսչու-
թիւնը՝ զարմանալի միջոց մը մարդիկ-
ներու առած է, որ իրենց կարձատեւ
կեանքէն եաքն ալ իրենց բարեգոր-
ծութիւնը կերպով մը յառաջ տանին։
Ըւասիկ աս միջոցը գիր կամ գրքերն
են։ Անոնցմով մարդ դարերով կ'ապրի
ու կը գործէ, առանց երկիրներ պար-
ագելու՝ աշխարհիս այլ եւ այլ կողմերը
քարոզութիւններ կ'ընէ, եւ հոգւոց
փրկութեան ու Աստուծոյ փառաւո-
րութեան գործակից կ'ըլլայ։
Հաւատացեալք՝ որոնք իբրեւ ճշմար-

տութեան եւ բարոյականութեան հե-
տեւալիներ, լուսոյ որդիք են, կրնան
եւս աւելի “յորդւոց աշխարհիս այսո-
միկն արվիլ, թէ գիր առնուած խօս-
քերը, այսինքն գրքերը, ինչ մեծ
զօրութիւն ունին մարդկան բարսյիցը
վրայ՝ մանաւանդ աս մեր ատենները։
Իրաւցրնէ՝ չկայ մեր օրերը՝ ապակա-
նութեան այնչափ առատ աղքիւր՝
ինչչափ գէշ գրքերը, որոնք մարդ-
կային աղդին ծաղկին աճելու ատեն՝
յանկարծ կը թուսումցընեն։ Եւ գէշ
ուերմ մըն են, որոնք չեն կրնար ուրիշ
բան յառաջ բերել՝ բայց եթէ մեղք,
հայ հոյութիւն, հոդւոյ փրկութեան
անհոգութիւն, քրիստոնէական պար-
տուց տղիտութիւն, անկրօնութիւն եւ
ամէն աստուածային ու գերբնական
բաներու անտարբերութիւն։

Աս ցաւալի վիճակին ապացոյցներն
ամէնուն աչքին առջեւն են։ Հարիւր
առրի կայ, որ Վաղթէր եւ անոր ամ-
պարշտութեան ընկերները մեռած
գացած են։ սակայն իրենց գրուած-
ներով գեռ երկրիս վրայ կ'ապրին։ Եւ

իրենց՝ մարդկան հետ ունեցած տուրե-
նւառը՝ գրեթէ անանկ կենդանի է՝
ինչպէս երբ որ ան Աստուծոյ թշնամի
առաջ փիլիսոփիաները գեռ հողագնդիս
վրայ կը պարտէին եւ բազմաթիւ
հաւատացեալ սրաեր Աստուծմէ կը
հեռացընէին:

Ասոնցմէ յայտնի է, որ ան միջնոր՝
զոր չարերը չարաչար կը գործածեն
աշխարհք ապականելու համար, նյուր
բարիներուն ձեռքը շատ զօրաւոր
միջոց մըն է՝ ժողովուրդը հաւատոյ եւ
բարոյականութեան բերելու եւ հրա-
չանդելու:

Ուստի նյոյն նուիրական միջնոր տեւո-
ղական կերպով մեր ազգին օգտին
գործածելու համար, Վիեննայի Միի-
թարեան Միաբանութիւնը յամին
1866 բարերարական Եղբայրութիւն
մը հաստատած է Անորոտ ՅԱ-ՆԵ-
անուամբ:

Տես այն Եղբայրութեան կանոնա-
դրութիւնը:

Հրատարակութիւննը

Եղբայրութեան

Անարատ Բղոկոթեան Ռ. Կոռսիմ:

1. Մէջէպէ գարլը սէօզէրէ ճէվապէր.
Տէրմիւն Հ. Մանուկէլ Ա. ին թէր-
միմսի. 1866: Թղթկզմ. 1:50, կտուլթ.
1:75, կշի. 2:50:
2. Թէօվակէրեար Մարիամ Մագդաղենա-
ցին կէճէլը. իժալիան լիսանրնան
Կ. Ա. ին թէրմիւմսի. 1862: Թղթկզմ.
1:—, կիսլթ. 1:25:
3. Հինն Ասսուած. Գոնորատ Պոյանտէնի
ժամանակակից վէպ. 1872: Թղթկզմ.
—35, կիսլթ. —50:
- 3ա. Ալահը գատիմ. Գոնորատ Պոյանտէնին
պէր հերքեացէսի. 1872: Թղթկզմ. —50,
կիսլթ. —75, լթկզմ. —90:
4. Յիսուս էփանիմիզն միւպարէք եիւ-
ույինն եօրթուսունա տոլուզ կիւն-
իւք հազըրլագ. Առաքելեան Կ. Ա. ին
թէրմիմսի. 1874: Թղթկզմ. 2:—,
կիսլթ. 2:25, լթկզմ. 2:50, կշի. 2:80,
կիկզմ. 3:—, սոկել. 5:—:
5. Քրիսթիան թէփէքքիւրէրի. Տէրմիւն
Հ. Մանուկէլ Ա. ին թէրմիմսի. 1875:
Թղթկզմ. —75, կիսլթ. 1:—:

6. Աղօթքը պատրաստութեան եւ գոհութեան սրբոց պատրաստութեան առաջ պատրաստի, վասն իւրաքանչիւր առուր շաբաթու. թարգմ. ի Հ. Թագէէ Ա. Թառնեան. 1880: Թղթակազմ. 1.՝ կազմ. 1.՝ կազմ. 1.25, լթկզ. 1.50, կկն. 2.՝:
7. Ենիկ տուա քիթապը. 1839: Թղթկզ. 2.՝, կիսլթ. 2.25, լթկզ. 2.45, կկն. 2.90, կկն. 4.50, կկն. սոկ. 6.՝:
8. Լեյսիի Օգոստինոս (Գիլըք Ս. Օգոստինոսի): Էնդարէ եպիսկոպոսու Առաքելան Կարապէտ Վ. ին թէրձիմէսի. 1881: Թղթկզ. 2.՝, կիսլթ. 2.30, լթկզ. 2.60, կկն. 2.90:
9. Լուրտ միւճիզաթլարը Էնդարէ եպիսկոպոս Առաքելեան Կարապէտ Վ. ին թէրձիմէսի. 1881: Թղթկզ. 1.50, կիսլթ. 1.75, կկն. 2.50:
10. Աղօթագիրը պաշտօնասիրաց սրբոյն Յովենիայ Աստուածահօր ի Հ. Գեւոնդ Ա. Յովեննեան 1883: Թղթկզ. 2.՝, լթկզ. 2.50, կկն. 2.80, կկն. 4.20, կկն. սոկ. 4.50:
11. Փիքիր տուասընա միւթեալիք հագու մատուէլք Թ. Ա. Տէրվիչեան Մանուէլ Վ. ին թէրձիմէսի 1884: Թղթկզ. 1.50, կիսլթ. 1.75, լթկզ. 1.՝, կկն. 1.25:
12. Տուա քիթապը ազիզ Պետրին մէ Ս. Յովենիային իւստիւ իւստիւ էպիսկոպոս Առաքելեան Կարապէտ Վ. ին թէրձիմէսի. 1884: Թղթմազմ. 1.՝, կիսլթ. 2.25, լթկզ. 2.50, կկն. 2.85, կկն. 4.50, կկն. սոկ. 6.՝:
13. Մեկնոթիւն (Համառաւ) Կարագրաց Տշմարիտ կրօնի, գրեալ ի Ճէրտիլ Կարդ.

12. Բրգմ. ի Հ. Սամուէլէ Ա. Գալթըննեան. 1885: Թղթկզ. 1.50, կիսլթ. 1.75:
14. Մարկելինոս կամ Եկեղեցի առ Կոնտանդիանոսի, թրգմ. Հ. Ա. Ա. Կերեսեան. 1886: Թղթկզ. 1.՝, կիսլթ. 1.25:
15. Քէյսու Մայիս այլ եախօս Նէվթարզ Մահի Մէրիէմ. 1888: Թղթկզ. 1.՝, կիսլթ. 1.25, լթկզ. 1.50:
16. Նմանութիւն Յիսուսի Քրիստոսի. Թովմաս Գեւմացի: Թրգմ. Հ. Թագէու Ա. Թոռնեան. 1894: Թղթկզ. 3.50, կիսլթ. 3.75, լթկզ. 4.՝, կկն. 4.35, կկն. սոկ. 5.20:
17. Հոգի կրօնառորդան, 1894: Թղթկզ. 1.50, կիսլթ. 1.75, լթկզ. 2.՝, կկն. 2.35, կկն. սոկ. 3.20:
18. Լաւթենեան Լիտանիայի վայ Մատանականեր: Թարգմ. Ստեփան Ա. Մելքիսեդեկան, Արքեպիսկոպոս Տիմոֆէյ (Հրժրէ. Եպկ. Կարնոյ), 1896: Թղթկզ. 3.՝, կիսլթ. 3.25, լթկզ. 3.50, կկն. 4.՝, կկն. սոկ. 5.՝:
19. Մատոնիկ Մարեմայ Դասերաց Շարեպաշական Միևնութեանց, ի Տ. Ալբ. Փասուէրի, Թրգմ. ի Հ. Մանուէլէ Մաշուրեան. 1898: Թղթկզ. 1.50, կիսլթ. 1.75, լթկզ. 2.՝, կկն. 2.50, կկն. սոկ. 3.50:

(Պիներն Փրանքով են:)

ՄԱՏԵՆԻԿ

ՄԱՐԵՄԱՅ ԳՈՏԵԲԱՑ

2

4 25

302

ՄԱՏԵՆԻԿ

ՄԱՐԵՄԱՅԻ ԳՈՏԵԲԱՅ

ԳԼԻԱՆՈՐ ԵՒ ԱՅԼ.

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ

ՀԱՐՍՓԵՑ

S. ԱԼԲԵՐՏՈՍ ՓԱՍՍԵՐԻ

ԸՆԴՀԱ. ՓՈԽ. ԼԱՏԵՐ. Վ.ԸՆ. ԿԵՆՈՆԻԿՈՍՅԱ

ԹԱՐԴԱՐԱՆՑ ՅԻՏԵՐԵՐԵՑ

Հ. ՄԱՆՈՒԵԼ. ՄԱԶՈՒՐԵԱՆ

ԿՐԹՆ. ՄՊՈՒԹ.



ՎԻԵՆՆԱ 1898

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

ՀՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԻՉՆ

Առ ԴՍԵՐՄ ՄԱՐԵՄԱՅ

Այս արագութիւնը՝ որով մեր փոքրիկ
Մատենին տասնուերեք տպագրութիւն-
ները ցայծմ սպառեցան, կը դրէ զմեզ
սիրով ձեռնարկնու շրջեքտասաներողին,
յուսալով որ նախընթացներուն պէս այս
ալմարդասիրութեամբ կ'ընդունովի ծեզմէ:
Այս նոր տպագրութեանս մէջ տո հոն
քանի մը յաւելուածներ պիտի զանէք,
որոնք ծեր նոգենոր օգտին նպաստաւոր
են, նմանապէս պիտի զանէք նորանոր
ներդութեանց եւ Արտօնութեանց ցու-
ցակը, գրոնք նորին Սրբութիւնը Նկան
ժգ. մարդասիրապէս չնորհած է:

Այս Մատենիկս չորս գլուխներու կը
բաժնուի:

Առաջնոյն մէջ համառօտիւ կը խօսուի
Մարեմայ Դատերաց Բարեպաշտական
Միութեան ծագման եւ Յառաջադիմու-
թեան վրայ. նոյնպէս թէ Յնչապէս նորին
Սրբութիւնը պիտո Թ. Սրբութիւնը Ազնէսի

Եղբայրութիւնը ներողութիւններով ձուխացւցած է՝ զայն Դլխաւոր կամ՝ Ասա-
չին քարձոր տիտղոսաւն զարդարներվ.
Նաեւ կը խօսուի նոյն Բարեպաշտական
Միութեան նպատակին եւ անոր անդա-
մոց ունեցած առաւելութեանց վրայ:

Երբորդին մէջ կարծառութիւ յառաջ
կը քերուի այն եղանակը՝ որով մարդ ինք
գիսքը Բարեպաշտական Միութեան մը
մէջ պիտի պահէ. Նոյնակէս կը յիշուին այն
կանոնները, որոնք յիշեալ Միութեան կա-
ռավարութեան համար պէտք են պահպա-
նուիլ:

Երբորդին մէջ պիտի գտնէք փոքրիկ
ծիսարան մը, որ ձեր նովիրական պաշ-
տամանց եւ բարեպաշտական ժողովոց
իբրև կամոն պիտի ծառայէ:


Չորրորդին մէջ ձեր առջեւը կը զրուի
ըրիստնէական կենաց համառոտ կանոնա-
գրութիւն մը, որուն վրայ կ'աւելցուին այն
աղօթքներն եւ չերմեռանդական գործերը,
որոնք ձեր բնութեան եւ վիճակին աւելի
կը պատշաճն, եւ այսու ձեր ներկայ
կենաց օրերն օգտակարաւէս եւ քրիս-
տոնէական երկիւղածութեամբ կ'անցընէք:

Ահաւասիկ, հարեւանցի եղանակաւ
այս աշխատասիրութեանս գաղափարն

յայսնեցի. զոր վերասին բոլորովին ձեզի
կը նուիրեմ, ովք Դատերք Անարատ Կուսին:

Վերջաւալէս, չենք կմնար եւ կմնալ
ով Սիրելի Դատերք Կուսին, զօեց Թախան-
ձելէ, որ մեր այս գրոյն այնպիս պիրով
եւ երախտագիտութեամբ ընդունիք, որով
կ'ընդունէիք գորովալից նօր մը սիրալիք
Խորաններն եւ փրկաւէտ Խորհուրդներս,
որ ասստիկ կը բաղանյ ձեր նոգւց փրկու-
թեան: Եթէ այս յօժարութեամբ ընդու-
նիք եւ ջանար ամենայն փութով մեր կեն-
դանի եւ հայրական ինամոնց համապա-
տասիսներն՝ երկրիս վրայ ասկէ աւելի
հատուցում յուսալու չենք համարձակիք
մեր անխոնչ եւ գործոննեայ աշխատու-
թեանց համար, զորոնք այս գորովակիս
տպագրութեան ատեն կրեցինք:

Ապրեցէք երջանկութեամբ Յիուսիք
եւ Մարեւայ ամենաքաղացք սրտերուն մէջ:



Պահպանիչ որդեգրաց, աղօթեա վասն մեր:

Մ Ա Տ Ե Ն Ի Կ
Մ Ա Ր Ե Մ Ա Յ Դ Ս Տ Ե Ր Ա Յ
ԳԼԽԸՆԻՈՒ ԵՒ ԸՆԼ ՄԻՈՒԹԵՆՆԾ

Պ Ա Ռ Ո Բ Ա Յ .
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—
1. ՄԵՐԵՄԵՑ ԳՈՏԵՐԵՑ ԲԵՐԵԳԱՇՏԱԿԵՆ ՄԻՈՒԹԵՆՆ ԾԱԴՈՒՄՆ ԵՒ ՑԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ.

Պարեմայ Գատերաց Բարեպաշտական Եզրայրութիւնն իւր ծագումն վանական կանոնիկոսաց կարգէն առածէ։ Ստոյգ է որ՝ ԺԲ գարուն սկիբըն երանելին Պետրոս Հանեպիո՛ որ վանական կանոնիկոս էր, եւ իւր խոնար-

Հութեան համար ինք զինքը մեղաւոր
կ'անուանէր, Ռաւէննայի նաւահան-
գրատիմն Սրբուհի Մարիամ եկեղեցւոյն
մէջ Մարեմայ Ուստեց եւ Գատերց
Բարեպաշտական Միութիւնը հաստա-
տեց, որնք բաց ի նուիրական միտալէ
մը՝ զր իրենց զիւն կը կախէին, կը
կապէին նաեւ իրենց մէջքը երկնագոյն
գօտի մ'ալ: 1594ին եւ 1640ին ուրիշ
վանական կանոնիկոս մը եւ Պետրոս
Գուրիէ իւր Մագէնդուրի ժողովը-
դապետութեան մէջ՝ Գաղղիա, կանգ-
նեց Անարատ Կուսին Միաբանութիւնն
աղջկանց համար: Այս օդտակար եւ
սուրբ հաստատութիւնն ետքէն մեր
գարուն Ողբմած Քերց գպոցներուն
մէջ՝ ի Գաղղիա Տէր Ստեփանոս կենդա-
նացուց, որ Առաքելութեան քահա-
նայից ընդհանուր մեծաւորն էր. Եւ յե-
տոյ շատ եռանդուն քահանայից ձեռ-
քով տարածուեցաւ. գլխաւորաբար Ի-
տալիա, ժողովրդապետութեանց, ման-
չերու եւ աղջկանց գպոցներուն մէջ:

Այս Բարեպաշտական Միութիւնս
իւր կատարեալ զարգացումն եւ յա-

ռաջագիմնութիւնն ունեցաւ Հռոմոյ
պարիսպներէն զուրու՝ Սրբուհի Ագնէսի
ժողովրդապետութեան մէջ. վաճն զի
հսն 1864ին, նշանաւոր Կուսին գերեզ-
մանին վրայ խնամովք Հ. Փասուէրիի,
որ վաճնական կանոնիկոս էր յիշեալ
Եղայրութիւնն եկեղեցական իշխա-
նութիւնէն հետեւեալ նոր տիտղոսաւ
պաշտօնապէս հաստատուեցաւ. “Բա-
րեպաշտական Միութիւն Մարեմայ
Գատերց ընդ պաշտպանութեամբ Ա-
նարատ Կուսին եւ Սրբուհի Ագնէսի
Կ. Եւ Մ::”

Այս Բարեպաշտական Միութիւնս
այսպէս հաստատուելին ետքը՝ բաղ-
մաթիւ ներողութիւններով եւ արու-
նութիւններով հարստացաւ, որնք
1866ին Յունուար 16ին Պիոս Թ. ին
կոնդակաւը շնորհուեցան, Փետրուար
16ին Քահանայապետը այն Միու-
թիւնը Գլխաւոր Եղայրութեան պա-
տուոյն բարձրացուց, շնորհելով իշ-
խանութիւն Ս. Ագնէսի ժողովրդա-
պետին եւ յետոյ 1870ին Փետրուար
4ին Լատերաննեան վանական կանոնի-

կոսաց ժամանակաւոր ընդհանուր Աբբային, որ բոլոր միւս Եղբայրութիւնները միացընեն եւ աշխարհիս ամէն կողմերը նորանոր հաստատութիւններ ընեն, նոյնպէս տան անոնց այն ներողութիւններն եւ արտօնութիւնները, զորոնք Գլխաւոր Եղբայրութիւնը կը վայելէ: «աեւ այժմեան Քահանայապեաը Լեւոն ԺՊ.՝ այն Գլխաւոր Եղբայրութիւնն երկու կոնդակու ձմիսացուց, Մարտ 21ին, 1879ին: Առաջնովը լիակատար ներողութիւն կը չնորհէր անոնց այն օրուան համար՝ յորում կ'ընդունուեին Բարեպաշտական Միութեան մէջ իբրեւ Պըստերը Մարեմայ. երկրորդովն զՀայրն Ալբերտոս Փաստերի անուոնելով իբրեւ հիմնադիր եւ ընդհանուր վարիչ Մարեմայ Դատերաց բոլոր Եղբայրութեան, որ է ընդպաշտանութեամբ Անարատ Կուսին եւ Ս. Աղնէսի կ. եւ Մ., կու տար նոյն անձին իշխանութիւն օրհնելու որ եւ իցէ Բարեպաշտական Միութեան միտաները, զոր Քոյլերն ի նշանակ Եղբայրութեան

առլորաբար իրենց պարանոցէն կը կախեն, բաց աստի՛ յիշեալ միտաներն կրոները կը ստանային լիակատար ներղութիւն իրենց մահուան կէտին: Հ. Ալբերտոս Փաստերի կրնար տալ նոյն իշխանութիւնն այնպիսի քահանապից՝ որոնք իննդրած առած էին կամ որոնք հրաւիրուած էին իրմէ կամ ուրիշ վարիչներէն՝ հետամուտներն եւ Մարեմայ Դուստրներն Բարեպաշտական Միութեան մէջ ընդունելու: Ահա այս Եղբայրութեան ծագումն եւ յառաջադիմութիւնը:

2. Մ. ԴՍ. ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ ԵՒ ՍՈՍԻԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Մարեմայ Դատերաց Բարեպաշտական Միութեան նպատակը՝ բաց ի Առաջնորդոյ մեծագոյն փառքը տարածելէ

։ Այս իշխանութիւններս յետոյ կոնդակաւ Լուսերանու վանական Կանոնիկոսաց ժամանակաւոր ընդհանուր Աբբային տրուեցան, Յունի 2ին, 1885ին:

Եւ Անարատ կուսին ջերմեռանդութիւնը տածելէ, և պահպանել օրիորդաց անմեղութիւնը, պաշտպանել անոնց մատաղ հասակը դարուս ապահանիչ ժանախախէն. կրօնական մվրդբանց եւ Ա. Խորհրդաց ձանապարհաւն անոնց առաջնորդել ի ճիշդ կառարումն պարտուց, զսրոնք ունին Առառածոյ, ընկերին եւ իրենց անձին նկատմամբ, նյոյնպէս ստանալու համար քրիստոնէական հաստատոն առաջինութիւններ Երկնից Անարատ Թագուհոյն ամենահաւատարիմ պաշտպանութեան ներքեւն, եւ ըստ լուսաւոր օրինակաց Երեքտասանամեայ Ա. Ազնէս Կուսին: Համառօտիւ խօսելով՝ այս Եզրայրութեան վախճանն աշխարհս միանձնու հիներով լեցընել չէ, ինչպէս ող այս բարի ընկերութեան թշնամիները կ'ըսեն, այլ կըթել օրիորդները, քսիառնէական բարեպաշտութեան եւ զգեստուց համեստութեան մէջ, որ իրենց ծնողքը մեծարեն եւ անոնց հնազանդին. որպէս զի օրմբատ իրենց վիճակին, որուն Առ

տուած զիրենք պիտի կոչէ, ըլլան հաւատարիմ հարսունք եւ ամենալարի մայրեր աշխարհիս մէջ, եւ հարսունք Քրիստոսի ի վանս, կամ նաեւ բարի կուսանքը յաշխարհի, եւ իրենց ընտանեաց ծոցոյն մէջ, ամէնուն՝ իրեւոգեղիկ ծաղկիներ, բարեպաշտութեան եւ առաքինութեան օրինակ ըլլալու համար:

2. Բաւական դժուարին կ'ըլլար, եթէ թուեինք ամէն օգուտները, զորոնք այս բարեպաշտական Սիութիւններս կ'ընեն ոչ միայն ընտանեաց, այլ նոյն իսկ ներքին ընկերութեան: Ստուգիւ ովկ կրնայ ուրանալ այն միախթարութիւնը, զոր ամենասուրբ Կուսին բարի Գատելը իրենց ծնողաց կուտան իրենց հնազանդութեամբն եւ փոթովը տնապին պարտաւորութեանց նկատմամբ, այս ի վորձոյ գիտենք: Ո՞վ կրնայ չճանչնալ այն բարիքը, զոր կ'ընեն ժողովրդեան, ի մասնաւորի Երիտասարդութեան, թէ իրենց պարկեշտեամբը, թէ իրենց Երկիխզանութեամբն եւ ջերմեռանդութեամբը,

Նաեւ Ա. Խորհրդոց եւ եկեղեցական
պաշտամանց յաճախութեամբը: Օ՞ն
եւ օ՞ն, կը բաւէ անդամ մը գիտել
այս բարի օրիորդներուս դրօշակը,
ճշգրիտ գաղափար մ'ունենալու հա-
մար այն բարիքներուն վրայ, զորոնք
այսպիսի միութիւններն ամէն կողմ
յառաջ կը բերեն: Ուստի պատշաճ է
որ պարզ ակնարկ մ'արձակենք քանի
մը գլխաւոր օգուտներուն վրայ, զորոնք
վերսիշեալ բարեպաշտական Միու-
թեան զրուող օրիորդները կը քաղեն:

Ուստի նախ եւ յառաջ, ամենա-
սուրբ Կոյսմ՝ եթէ է Մայր ամենայն
քրիստոնէից, եթէ ամենուն գթած-
աչք կը նայի եւ երկնային պարզեւ-
ներն անոնց առատութեամբ կը բաշխէ,
որպիսի մեծագոյն իրաւամբ գթութիւն
պիտի չցուցընէ այն երիտասարդ որբ-
աւերուն, որոնք իրենք զիրենք մասնաւոր
եղանակաւ անոր կը նուիրեն:

Բայց աստի, Յիսուս Քրիստոս իւր
Աւետարանին մէջ մեզի կը սորվեցընէ
թէ ուր որ երկու կամ երեք հոգի
ժողված են իւր անուամբը, ինքը հոն

անոնց մէջն է: Արդ երբ Բարեպաշ-
տական Միութեան օրիորդները կը
հաւաքուին անոր Մայրը մեծարելու
համար, այն հաւաքումը միթէ Որդւոյն
անուամբը չէ: Ուրեմն անոնք ապահով
կրնան բլալ՝ որ իրենց ժողովները
աստուածային Վարդապետին մաս-
նաւոր պաշտպանութիւնն եւ օրհ-
նութիւնն անին:

Պէտք է յաւելուլ որ իրենց Միու-
թեան զօրութեամբն իւրաքանչիւր
անդամ կը մասնակցի ամէն բարի գոր-
ծոց, աղօթից եւ Հաղորդութեանց
որոնք Գլխաւոր Եղբայրութեան հետ
միացող իւրաքանչիւր Բարեպաշտական
Միութեանց մէջ կը կատարուին: Արդ՝
ով կրնայ մի առ մի թուել այն ամէն
Հոորհըներն եւ հոգեւորական օդուա-
ները, զորոնք այս սուրբ ընկերութիւնս
իւրաքանչիւր անդամնց կը հայթայթէ:
Օրիորդի մը համար քաղը սփափանք
չէ, զիսաւորաբար հոգեւորական անձ-
կութեանց եւ առանին աշխատու-
թեանց մէջ, երբ մասած է թէ աշխար-
հիս մէջ դրեթէ անթիւ բաղմու-

թեամբ Քոյրեր ունի, որոնք իրեն
համար կ'աղօթեն։ Անոր տառապեալ
հոգին չեմ միսիթարուիր՝ երբ բարիք
դործելու հեղդութիւն զգայ, կամ
երբ ինք զինքը ծանր վտանգի մը մէջ
գտնէ, կամ բուռն փորձութենէ մը
փորձուիր, այն մոածութեամբ՝ թէ
թէրեւս նոյն վայրկենին իւր միաբա-
նակից Քոյրերէն մէկը հասարակաց
Մօրը խորանին առջեւն ինկած իրեն
համար կ'աղօթէ։

Բաց աստի, ուրիշ շատ անհամար
օգուտաներ ալ կան, որպիսի են փո-
փոխբարի օրինակը, առաքինութեանց
դործագրութեան քաջալերութիւնը,
այն խրաներն եւ մասնաւոր կրթու-
թիւնները, զրոնք Բարեպաշտական
Միութեան մէջ կ'ընդունին. որպէս
զի անարատ վարը ունենան եւ ըլլան
երկրիս վրայ իբրեւ հրեշտակ, եւ
արդարոց քաղցր մահուան հաղոր-
դակից։ Ի հաստատութիւն ասոր՝
պէտք է կարդալ այլեւայլ Բարեպաշ-
տական Միութեանց տեղեկութիւն-
ներն եւ մեռելաթուոց ծանուցումները,

զրոնք կը հրատարակէ այն պարբերու-
կան թէրթը՝ որուն ափազոսն է՝ Մարե-
նա Դաստիար Ս. Աբովյանի ժերեզմանն
վրայ. որ քսանուՀինգ տարիէ ի վեր
կը տպագրուի ի Հռովմ, իբրեւ դործիք
Գլխաւոր Միութեան։

Բարեպաշտական Միութեան օ-
գուտաներն միայն այս ներկայ կենացս
վրայ չեն ամփոփուիր, այլ կը հետեւին
անոր անդամներուն գերեզմանէն ան-
դին ալ. վասն զի երբ անսնցմէ մէկը
մեռնի, Բարեպաշտական Միութիւնն
անոր հոգւոյն կ'օգնէ պատարագնե-
րով, Ս. Հաղըրդութիւններով եւ հա-
սարակաց աղթիւք։

Վերջապէս, Գլխաւոր եւ ուրիշ
Միութեանց Մարեմայ Գասուբը՝ տար-
ւոյն մէջ շատ ներսութիւններ կրնան
վասարկիլ, զրոնք կրնան մերձեցրնել
նաեւ ննջեցեալ հաւատացելոց։ Ահա
անոնց ցուցակը։

Յ. ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՎ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐ
ԹԻՒԽՆՆԵՐ

Ընորհեալ ի մշանջենաւորս Զեւսամբ Պիոս թ. ին եւ այժմեան Լեւոն ԺԳ. Քահանայապետին Հռոմայ՝ Պրլիսւոր Բարեպաշտական Միութեան, որ “Մարեմայ Գատերաց”, տիտղոսը կը կրէ եւ է ընդ պաշտպանութեամբ ամենասուրբ Կուսին եւ Ս. Աղնեսի Կուսին եւ Մարտիրոսի, որ օրինաւորապէս հաստատուած է վերջնոյս Եկեղեցւոյն մէջ, որ Հռոմայ պարիսպներէն զուրս է եւ կը վերաբերի Լատերանու վանական Կանոնիկոսաց : Կոյնոպէս ուրիշ Բարեպաշտական Միութիւնք որոնք նոյն տիտղոսով հաստատուած են եւ պիտի հաստատուին՝ բաւական որ վանական Կանոնիկոսաց ընդհանրական Աբբայէն ընդունուած ըլլան, մասնակից կ'ըլլան, նոյն ներողութեանց եւ արտօնութեանց, զորոնք չնորհելու իշխանութիւնն այս վերջինս Առաքելական Աթոռէն 1870ին Փետրուար 4ին կոնդակաւն առած է :

ա. Հիսկասար Աերողոսթիւններ :

1. Լիակատար ներազութիւն կը վաստիին օրիորդներն այն օրելը՝ երբ իբրեւ հետամուտ՝ Բարեպաշտական Միութեան մէջ ընդունուին եւ անուանին “Գուսար Մարեմայ”, եթէ ճշմարտապէս զղջուղի խոստավանին եւ հաղորդուին : (Պիոս թ., Լեւոն ԺԳ.)

2. Մահուան կէտին՝ եթէ ճշմարտապէս զղջան, խոստավանին եւ հաղորդուին, եւ կամ եթէ այս կարելի չըլլայ՝ գէթ կատարեալ զղջում ունենան, լեզուաւ՝ եթէ կարենան, կամ գոնէ սրտիւ՝ Ցիսուսի անունը Ձերմեռանդութեամբ օդնութեան կանչեն :

3. Քրիստոսի Ծննդեան եւ Համբարձման տօնելուն՝ եթէ ճշմարտապէս զղջան, խոստավանին եւ հաղորդուին, եւ յետպ Բարեպաշտական Միութեան Եկեղեցւոյն այցելութիւն ընեն, կամ յեռաւրութեան պատճառաւ եթէ այս անհնարին ըլլայ՝ նոյն այցելութիւնն ընեն որ եւ իցէ Եկեղեցւոյ մը

կամ հրապարակական ազօթարանի մը, եւ հոն աղօթեն քրիստոնեայ իշխանաց միաբանութեան, հերետիկոսութեանց ջնջման եւ Արքոյ Մօր Եկեղեցւոյ պայծառութեան համար:

4. Բարեպաշտական Միութեան երկու տաճերուն՝ ալյունքն Ս. Կուսին Անարատ Յղութեան եւ Ս. Ագնեսի Կ. եւ Պ.:

5. Անարատ Կուսին Շռնդեան, Աւետման, Տեսանցնդառաւածի, եւ Վերափոխման տօներուն:

6. Ամենասուրբ Վարդարանին տօնին:

7. Ամենայն Արքոյ տօնին:

8. Ամին անդամ մ'այն օրը, յուրում ձշմարտապէս կը զղջան եւ կրխոսովանին եւ հաղորդուելէն եաքը՝ Եթէ Բարեպաշտական Միութեան եկեղեցւոյն այցելութիւն ընեն եւ հոն ըստ վերսիշելոյն աղօթեն, միայն թէ ներկայ գտնուելու են ամսական ժողվոյց, որոնց մէջ ասսուածային պաշտամունքներ եւ ջերմեռանդական գործը կը կատարուին:

9. Վերջապէս, եթէ ջերմեռանցութեամբ հոգեւորական կրթութեանց ներկայ գտնուին, որոնք առվորաբար ամէն տարի կ'ըլլան Բարեպաշտական Միութեան մէջ, գոնէ հոգեւորական կրթութեանց տեւողութեան կէսէն աւելի ներկայ ըլլալու պայմանաւ Եթէ ձշմարտապէս զղջան, խոստովանին եւ հաղորդուին եւ ըստ վերսիշելոյն Բարեպաշտական Միութեան եկեղեցւոյն այցելութիւն ընեն եւ հոն աղօթեն, նոյնպէս կը վաստըկին լիակատար ներզութիւն:

Բ. Մասմական ներողութիւններ:

Բարեպաշտական Միութեան անդամներն եթէ գէթ սրտանց զղջան եւ իրենց եկեղեցւոյն կամ հրապարակական աղօթարանի մ'այցելութիւն ընեն եւ հոն ըստ վերսիշելոյն աղօթեն, եօթը տարուան եւ նոյնչափ քառասուն օրուաններութիւն կը վաստըկին Մարեմայ Անարատ Կուսին բոլոր Հետեւեալ տօներուն, ըստ հրապարակին՝ որ 1862 Սեպտեմբեր 13ին տրուեցաւ:

10. Մարեմայ կուսին եօթն Յաւոց
տօնին (Ծաղկազարդի նախորդ Ռւբ-
բալթը):

11. Ամենասուրբ Մարեմայ Այցե-
լութեան տօնին. (Յուլիս 2ին):

12. Մարեմայ կուսին Կարմեղեան
Հանդերձին տօնին (Յուլիս 16ին):

13. Ամենասուրբ Մարեմայ Զեանց
տօնին (Օգոստոս 5ին):

14. Մարեմայ Անուան տօնին (իւր
Ծննդեան ութօրէից մէջ պատահած
կիրակին):

15. Մարեմայ կուսին եօթն Յաւոց
տօնին (Սեպտեմբերի Գ. Կիրակին):

16. Երանելի կուսին Գթութեան
տօնին (Սեպտեմբեր 24ին):

17. Մարեմայ կուսին Ընծայման
տօնին (Սոյեմբերի 21ին):

գ. Ուրիշ մասնական ճերողութիւնն-
ելք:

Ա Երոյիշեալ անձինքը կը վաստրին
նաեւ վաժտուն օրուան ներութիւն
ինչ եւ իցէ բարի գործերու համար զո-
րնք ըստ կանոնաց Բարեպաշտական

Միութեան կը կատարեն. օրինակի ա-
զագաւ.


18. Եթէ ներկայ ըլլան աստուա-
ծային պաշտամանց, Քարոզներուն,
Ժողովոց՝ սրոնք առլորաբար շաբաթն
անդամ մը կը գումարուին. կամ Եթէ
ներկայ գանուին Բարեպաշտական
Միութեան վարչին հոգեւորականքա-
նակցութեանցն եւ յորդորանց :

19. Եթէ ներկայ գանուին Ժողովոց՝
սրոնց մէջ ուրիշ օրիորդներ Բարե-
պաշտական Միութեան անդամ կ'ըն-
դունուին եւ միւս անդամներէն ոմանք
ժամանացութեան եւ Բարեպաշտական
Միութեան ուրիշ գործոց պաշտօնեայ
կ'ընտրուին:

20. Եթէ լուր օրերը Ս. Պատարա-
գին ներկայ գանուին:

21. Եթէ ամենասուրբ Հաղորդու-
թիւնը մեծարեն եւ պատուեն, ամե-
նասուրբ Մարեմայ եւ Ս. Ագնեսի ա-
զօթք ընեն գոնէ իրենց սեպհական
բնակարանին մէջ:

22. Եթէ Մարեմայ Անուան հինգ
սաղմոսները՝ կամ վարդարանը, կամ



գեթե երեք Ողջոյն եւ Հայր մեր մը ի
պատիւ Ս. Աղնէսին ըսեն :

23. Եթէ զՄարիամ Կոյսն առառուա-
ծային երգերով մեծարեն, հեռանա-
լով միշտ աշխարհական երգերէ :

24. Եթէ ամէն օր կատարեն սուրբ
մասծութիւնը. Հոգեւորական ըն-
թերցումն եւ խորձի մտաց քննութիւնը :

25. Եթէ իրենք զերենք կրթեն ա-
ռաքինութեանց մէջ, եւ ի մասնաւորի
սիրոյ, մաքրութեան, խոնարհութեան
եւ հնազանդութեան առաքինու-
թեանց մէջ :

26. Եթէ ընկերն փրկաւէտ իրատ-
ներով եւ պաղատանօք չարիքէ մը հե-
ռայընեն :

27. Եթէ վլտացեալները միկիթա-
րեն, եւ թշնամեաց մէջ խաղաղու-
թիւն հաստատեն :

28. Եթէ իրենց միաբանակից Քերց
մէկուն կամ հաւատացելոյ մը մա-
հուան զանգակին ձայնը լսելուն պէս
անոնց համար Աստուծոյ ազօթք ընեն :

29. Եթէ իրենց միաբանակից ննջե-
ցեալ Քերց մէկուն կամ հաւատա-

ցելոյ մը մինչեւ գերեզմաննոցն ընկե-
րանան :

30. Եթէ հիւանդաց կամ բանտար-
կելոց այցելութիւն ընեն, եւ աղքա-
տաց ողբրմութիւն տան :

31. Եթէ ագանելեաց մէջ պար-
կեշտ ըլլան, կամ կաքաներէն, գի-
շերային ակումբներէն, կամ ուրիշ
վասնդաւոր զբոսանքներէն փախչին :

32. Եթէ համբուրեն այն օր հնած-
միտալը՝ զոր իրենց վզէն կը կախեն,
եւ այլն, եւ այլն :

η. Այնուայլ այցելութեանց կապուած
Ներսդութիւններ :

Բարեկալաշտական Միութեան ան-
դամ եղող Քոյրերն եթէ Մեծպահոց
ամէն օրն եւ տարւոյն միւս օրերն՝
որոնք Հռոմէական Մաշտոցին մէջ
նշանակուած են այցելութեամբ նե-
րողութիւն վաստիելու համար՝ Ծեր-
մեռանդութեամբ այցելութիւն ընեն
Բարեկալաշտական Միութեան եկեղե-
ցւոյն, եւ եթէ հեռաւորութեան պատ-

նառաւ չկարենան՝ որ եւ իցէ եկեղեցւոյ
կամ հրապարակական աղօթարանի
մը, եւ եթէ հոն բատ վերսիշելոյն ա-
զօթեն, կը շահին այն բոլոր ներողու-
թիւնները՝ զորոնք կը վաստրկին եթէ
այցելութեանց սահմանուած օրերուն
մէջ Հռոմայ եկեղեցեաց այցելութիւն
ըստած բլազին. միայն թէ պէտք են
կատարել յիշեալ ներողութեանց հա-
մար պահանջուած պայմաններն:

Այս ներողութիւններն հետեւեալ-
ներն են՝ ինչպէս Պիտոս Զ. ին 1777,
Յուլիս 9ին հրապարակին յայտնի է:

33. Քրիստոսի թրփառութեան եւ
Յայտնութեան, առաջաւորաց բարե-
կենդանին, բուն բարեկենդանին յա-
ռաջ եղած Կիրակին եւ բուն բարե-
կենդանին 30 տարուան եւ նոյնչափ
քառասնօրեայ ներողութիւն:

34. Մեծպահոց մէջ. — Մոլորոց չո-
րեցարթին եւ գ. Կիրակին՝ 15 տա-
րուան եւ նոյնչափ քառասնօրեայ նե-
րողութիւն:

35. Ծաղկազարդին՝ 25 տարուան եւ
նոյնչափ քառասնօրեայ ներողութիւն:

36. Աւագ Հինգշաբթին՝ լիակատար
ներողութիւն:

37. Աւագ Ուրբաթն եւ Շաբաթը՝
30 տարուան եւ նոյնչափ քառասնօ-
րեայ ներողութիւն:

38. Մեծպահոց միւս օրերը, ըլլան
տօնական, ըլլան լուր օրեր, 10 տա-
րուան եւ նոյնչափ քառասնօրեայ նե-
րողութիւն:

39. Զատիկի Կիրակին՝ լիակատար
ներողութիւն:

40. Ութօրեկից բոլոր միւս օրերուն
մէջ Կոստանդնուպոլիս ալ միատեղ՝ ամէն
օր 30 տարուան եւ նոյնչափ քառաս-
նօրեայ ներողութիւն:

41. Ս. Մարկոս Վեճաբաննչին տօ-
նին եւ Պաղատանաց երեք օրերը՝
30 տարուան եւ նոյնչափ քառասնօ-
րեայ ներողութիւն:

42. Համբարձման՝ լիակատար ներո-
ղութիւն:

43. Հոգեղալստեան Կիրակիին նա-
խորդ շաբաթը՝ 10 տարուան եւ
նոյնչափ քառասնօրեայ ներողու-
թիւն:

44. Հողեղալստեան Կիրակին եւ
ութօրէից միւս օրերն՝ շաբաթ օրն ալ
միատեղ առնելով՝ ամէն օր 30 տառ
տան եւ նոյնչափ քառասնօրեայ ներ
ըողութիւն:

45. Աեպտեմբերի Երեք պահոց օ-
րերն 10 տարուան եւ նոյնչափ քա-
ռասնօրեայ ներողութիւն:

46. Յիսոնակաց մէջ. — Ա., Բ. եւ
Դ. Կիրակիներն 10 տարուան եւ նոյն-
չափ քառասնօրեայ ներողութիւն:

47. Գ. Կիրակին 15 տարուան եւ
նոյնչափ քառասնօրեայ ներողութիւն:

48. Դեկտեմբերի Երեք պահոց օրե-
րուն մէջ 10 տարուան եւ նոյնչափ
քառասնօրեայ ներողութիւն:

49. Քրիստոսի Ծննդեան նախըն-
թաց օրը՝ դիշերն եւ արշալուսոյ պա-
տարագին ասենը՝ 15 տարուան եւ նոյն-
չափ քառասնօրեայ ներողութիւն:

50. Ծննդեան օրը՝ Լիակատար նե-
րողութիւն:

51. Վերջապէս՝ Երեք տօնական
օրերը 30 տարուան եւ նոյնչափ քա-
ռասնօրեայ ներողութիւն:

Է. Ներողութիւններ նեջեցելոց հս-
տար եւ որդից արտօնութիւններ :

52. Վերայիշեալ բոլոր ներողու-
թիւններն կիսան ի նպաստ հաւատա-
ցեալ ննջեցելոց մերձեցուիլ:

53. Այս պատարազները՝ որոնք կը
մատուցուին ննջեցեալ Քերց Համար
Գլխաւոր Բարեպաշտական Միութեան
խորանին վրայ եւ միւս Բարեպաշտական
Միութեանց խորանաց վրայ, մատու-
ցանող քահանանը լլայ աշխարհական,
ըլլայ վանական, հաւասարապէս կը
նպաստեն, իբր թէ արտօնեալ խորանի
մը վրայ մատուցուեին:

54. Լատերանու Կանոնի կոսոաց ընդ-
հանրական Աբբան եւ Բարեպաշտական
Միութեանց վարիչները մի եւ նոյն նե-
րողութիւնները կը վայելեն, բաւական
որ պահանջուած պայմանները կատա-
րեն:

55. Լեւոն ԺԳ. Քահանայապետը
Լատերանու վանական Կանոնի կոսոաց
մեծապատիւ ընդհանրական Աբբային
իշխանութիւն շնորհեց օրհնելու ըստ

Եկեղեցական կանոնաց այն միտալները՝
դորսք Գյորեն իրենց պարանոցներէն
կը կախեն իբրեւ նշանակ Բարեպաշ-
տական Միտթեանց, հանդերձ մա-
հուան կէտին վաստրկուելի լիակատար
ներողութեամբ։

56. Լեւոն ծԳ. Քահանայապետ
Լատերանու վանական կանոնիկոսաց
ժամանակաւոր ընդհանրական Աբբան
անուանած է ընդհանուր վարիչ Մա-
րեմայ Գրատերաց բոլոր Եղբայրութեան,
որ է ընդպաշտապահութեամբ Անարատ
Կուսին եւ Ս. Ագնեսի : Նոյն Աբբան
ունի նաև ըստ վերցիշելոյն՝ իշխա-
նութիւն միտալներ օրհնելու որ եւ իցէ
Բարեպաշտական Միտթեան մէջ, եւ
նոյնը կրնայ տալ այն քահանայից,
որոնք իրմէ նոյնը կը ինդրէն, եւ իրմէ
կամ ուրիշ վարիչներէն կը հրաւի-
րուին Բարեպաշտական Միտթեան
մէջ հետամուաներն եւ Մարեմայ
Դուստրներն ընդունելու :

— Այս ներկայ ներողութեանց քա-
շուածոյքու որ կը վերաբերի Մարեմայ
Դուստրաց գլխաւոր Եղբայրութեան,

որ է ընդպաշտապահութեամբ եւ Ա-
նարատ Կուսին եւ Ս. Ագնեսի կ.
եւ Ս. Համաձայն վաւերական յի-
շատակարանաց, եւ անոր Համար կրնայ
ապագրուիլ եւ հրատարակուիլ։

Տուեալ ի Հռոմ, ի դիւանէ ներո-
ղութեանց Ս. Ժողովոյն

2 Ապրիլ, 1879

Տ. + Կ.

Ա. ՊԱՆԻԶԻ, բարտուլաք

57. Գլխաւոր եւ միւս Բարեպաշտա-
կան Միտթիւններն արտօնութիւն ու-
նին իրենց Եկեղեցեաց կամ մատրանց
մէջ ամենասուրբ Կուսին Անարատ
Յղութիւնն անոր ութօրէից որ եւ իցէ
օրը տօնելու՝ ըստ որոշման իւրաքան-
չեւր վարչաց, նոյն օրուան պատարագ-
ներն յիշեալ Տօնին սեղհականու-
թիւնները պիտի ունենան, եթէ նոյն
օրն Անարատ Կուսին ուրիշ տօն մը
կամ առաջնակարգ տօներէն մէկը
չհանդիպի, եւ եթէ նոյն օրը Կիրակի,
կամ առաջնակարգ կամ Երկրորդ
կարգի տօն մը չհանդիպի՝ օրուան

պատշաճ ժամասայութեան ժողովը ըստ գալեական կամ վանական պատառադր զանց պիտի չառնուի (զայն մատուցանելու պարտաւորութիւնը միշտ կայ), խորագրերը պէտք են պահուիլ, եւ այն առանձնաշնորհութեան հրավարտակէն օրինակ մը թեմական եպիսկոպոսարանին դիւանին պէտք է մատուցուիլ:

(Այսպէս Լեւոն Ժ.Գ. Քահանայապէտը, Հանդերձ ստորագրութեամբ ծէսերու Ս. Ժողովյն, 13 Մարտի 1879):

58. Գլխաւոր եւ միւս Եղբայրութիւններն արտօնութիւն ունին իրենց եկեղեցեաց կամ մատրանց մէջ իրենց պաշտպանին Ս. Ագնեսի տօնն անոր ութօրէից մէջ որ եւ իցէ օր մը տօնելու ըստ սրոշման տեղական վարչին՝ Հանդերձ Տօնին յատուկ պատարագներովը, եթէ Հանդիսաւոր պատարագին նկատմամբ կրկին առաջնակարգ տօն մը չհանդիպի, եւ թիւ պատարագներուն նկատմամբ եթէ առաջնակարգ կամ նկատմամբ կարգի տօն մը՝ կամ արտօնութիւն կարգի տօն մը՝ կամ արտօ-

նեալ Կիրակի մը չպատահի, եւ ըստ վերնոյն ժողովագութեական պատարագն ալ զանց պիտի չառնուի, եւ այլն: Իսկ Ս. Ագնեսի Մայր եկեղեցւոյն մէջ Սրբուհւոյն յատուկ պատարագները կրնան մատուցուիլ ութօրէից մէջ պատահած Կիրակին որ եւ իցէ լուրանի վրայ. իսկ միւս օրերն՝ ուր որ Սրբուհւոյն մարմինը կը հանձչի: (Այսպէս Պիոս Թ. Քահանայապէտը ծէսերու Ս. Ժողովյն ստորագրութեամբը, Յունուար 14ին 1869. — Փետրուար 1ին [Մայր եկեղեցւոյն համար] 1872. — Փետրուար 6ին 1873. — եւ Լեւոն Ժ.Գ. Քահանայապէտը, Մարտ 13ին 1879):

Ա Զ Դ

Ով որ գէթ շաբաթն՝ անգամ մը խոստովանելու ժողովելի սովորութիւնն ունի՝ կրնայ վաստըկիլ բոլոր այն ներողութիւնները՝ որոնք ամէն օրուան համար տրուած են, միայն թէ պահանջուած պայմանները կատարելու է, առանց վերստին խոստովանակ ըլլա-

Եռւ (նաեւ եթէ երբեմն օրինաւորապէս
արդելուած չըլլայ) . բայց Յորելինինեւ-
րողութիւններն ասկէ ի բաց առնելու-
է . — Ըստ Հրովարտակի ներողու-
թեանց Ս . Ժողովոյն , հաստատեալ ի
Կղեմէս ճ.Գ. , 9 Գեկտեմբերի 1763 :

Բ . Որ եւ իցէ առնի մը կապուած նե-
րողութիւնները շահելու համար՝ Ս .
Հաղորդութիւնը կրնայ անոր նախըն-
թաց օրն առնուիլ : — Ըստ Հրովար-
տակի նոյն Ժողովոյն , Յուլիս 15ին
1822 , հաստատեալ ի Պիոս Զ . :

Գ . Երկարասեւ եւ տեւական հիւ-
անգները որոնք անէն դուրս ելելու
անկարող են (ի բաց առնելու է զա-
նոնք , որոնք հասարակութեան մէջ
կ'ապրին) կրնան լիակատար ներողու-
թիւնները շահիլ , եթէ ճշմարտապէս
զզնան եւ փոխանակ Հաղորդութեան
եւ այցելութեան՝ իրենց խոստովանա-
հօրեն տրաւած պայմանները կատարեն :
— Ըստ Հրովարտակի նոյն Ժողովոյն , հաս-
տատեալ ի Պիոս Թ. , 18 Սեպտեմ-
բերի 1862 .

Պ Լ Ո Ւ Խ Բ .

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Գործնական եղանակ Բարեպաշտական
Միութիւն մը հիմնելու :

Ով որ տեղ մը Մարեմայ Գասերաց
Բարեպաշտական Միութիւնը հաստա-
տել կ'ուզէ , ամէն բանէն յառաջ իւր
գաղափարը Տեղական Առաջնորդին
պէտք է յայտնել եւ Բարեպաշտական
Միութեան կանոնները կամ գրքով
աղերսագրիւ մը անոր ներկայացր-
նել , անկէ օրինաւորապէս հաստա-
տուելու հրաման խնդրելով : Այս Բա-
րեպաշտական Միութիւնա պէտք է
հաստատուիլ եւ հիմնուիլ կարդառոր
Եպիսկոպոսէն գլխաւոր տիտղոսաւն ,
այսինքն Բարեպաշտական Միութիւն

Մարեմայ Գոտերաց ընդ պաշտպանութեամբ Անարատ Կուսին եւ Ս. Աղնէսի կ. եւ Մ:

Յետոյ նոր Եզրայրութեան վարիչը պիտի ընտրէ երկու եռանդնոտ տիկիններ, որոնք կրնան այրի կամ ամուսնացեալ ըլլալ. մէկը վարչուհի եւ միւսը փոխ-վարչուհի: Այն ատեն օրիորդներն իրենք զերենք պատրաստեն՝ սորվելով իրենց նպատակն եւ կարեւոր պայմանները, որոնք հարկաւոր են Մարեմայ Դուստր ըլլալու համար: Վարչին, վարչուհուցն եւ փոխ-վարչուհուցն կը վերաբերի առաջն անդամ ներկայացողներն իրեւ հետամուտ ընդունելու, իսկ եթէ յուսալից են՝ առաջին հաստատութեան ատեն կրնան նաեւ իրեւ Դուստր Մարեմայ ընդունուիլ, եթէ ընտրուած օրիորդներն իրենց անըստգիւտ վարուքն երեքին ալ ծանօթըլլան:

Բարեպաշտական Միութիւնն հիմնելու համար՝ որոշեալ խորանին վրայ պատարագ պիտի մատուցուի, յետոյ

վարիչը թեմական Եպիսկոպոսին հրամանագիրը պիտի կարգայ եւ միտալ-ները փոխ-վարչուհուցն եւ հետամուից վզէն պիտի կախէ այն արարողութեամբը՝ որ իւր կարգին մէջ որոշուած է:

Վարիչը պիտի ջանայ որ կարգաւուրին ուրիշ աղաջանք մ'ալ ընէ, իրն դրելով անկէ հրաման միացընելու նորածին Եզրայրութիւնը Ս. Աղնէսի Բարեպաշտական Գլխաւոր Միութեան հետ, որպէս զի վերջնույն շնորհուած ներողութեանցն եւ արտօնութեանցը մասնակցի: Ընդունած հրամանագիրը պիտի խաւրէ ի Հռոմ ի Ս. Պետրոս ի Կապանս՝ Լատերանու վանական Կանոնիկոսաց ընդհանուր Աբբային, որպէս զի ստանայ ներողութեանց մասնակցելու մուրհակը, զոր հրատարակելէն յառաջ տեղական եպիսկոպոսին պիտի ցացընէ: Այն հրամանագը երն, նոյնպէս Մարեմայ Դուստրաց եւ հետամուից ցանկերը՝ վարչին ջանիւքը քառակուսի տախտակիներու վրայ առնուած՝ Եզրայրութեան մատրան մէջ՝

կամ ուր որ ժողովները կը դումորուին
ի տես պիտի դրուին :

Բարեպաշտական Միութիւնը կաղ-
մակերպելու համար ընտրութեանց
յօդուածին մէջ գրուած եղանակաւ
առաջին երեք հետամոից մէջէն մէկը¹
դաշերէց, մէկն առաջակայ եւ միւս
խորհրդական ընտրելու է, որոնք
միանդամայն վարչէն, վարչուհոյն եւ²
փոխ - վարչուհոյն առժամանակեայ
խորհրդատուներն են եւ որոնք (եթէ
սկզբան անդ իրեւ հետամուտ ընդու-
նուեցան) մէկ կամ երկու ամսոյ փոր-
ձէն վերջն առանց քննութեամն կ'ըլ-
լան Գատերը Մարեմայ: Առժամանա-
կեայ խորհրդան գործն է որոշել
դաղսնի քուէիր ընդունելու իրեւ
Գուտար Մարեմայ միւս առաջին հե-
տամուտները՝ նոյնպիսի փորձէ մը
վերջը, նմանապէս ընդունիլ ուրիշ
օրիորդներ, որոնք իրենք զերենք այս
միջնորդին կը ներկայացընեն, բայց անոնք
հետամոից մէջ որոշեալ ժամանակին
միայն պիտի ընդունուին, որուն վրայ
իւր տեղը կը խօսինք:

Առաջին հետամուտներն իրենց փոր-
ձի ժամանակին աւարտելէն վերջը կ'ըն-
դունուին իրեւ Գուտար Մարեմայ,
առժամանակեայ խորհուրդն անմիջա-
պէս պիտի դադրի եւ պաշտօնէից
վերջնական ընտրութիւնը պիտի կա-
տարուի:

Կորին Սրբութիւնը Պիտո թ. . Քա-
հանայապեան՝ առանձին շնորհիւ մը
կը մէս Ը. ի Սահմանադրութիւնը ջնն-
ջելով՝ շնորհեց որ առանց հետառ-
ութեան նայելու՝ եպիսկոպոսները
կարենան մի եւ նոյն տեղոյն մէջ Մա-
րեմայ Գատերաց շատ Միութիւններ
հիմնել ընդ պաշտպանութեամբ Ա-
նարատ Կուսին եւ Ս. Ազնէսի (Տես
ընդարձակ Գրքուկին մէջ ներզու-
թեանց Ս. Ճողովոյն Քաղաքին եւ
Աշխարհին հրովարտակը, Օգոստոս 30,
1866. եւ Փետրուար 4ին հրովարտակը
1870ին:)

Եռանդնոտ քահանայից կը յան-
ձնուի որ այս բարեպաշտական հաս-
տատութեանց մէջ միւս թիւն պահէն.
ուստի ջանան որ ոչ միայն Բարեպաշ-

տական Միութիւններ հիմնեն այն
ափառսաւն, զր Ս. Ազնէսինն ունի,
եւ կարող է միացընել մի եւ նոյն ա-
նուամբն եւ հաստատութեամբն եղած
Բարեպաշտական Միութիւնները՝ հա-
զրդելով անոնց իրեն սեպհական նե-
րողութիւններն եւ արտօնութիւննե-
րը, այլ կառավարել զանոնք նոյն կա-
նոններով՝ որպէս զի նոյն հոգին՝ պա-
հուի. նոյնպէս աշխատելու են միա-
ցընել զանոնք Գլխաւոր Բարեպաշտա-
կան Միութեան հետ, որպէս զի
անոնց անդամ գրուղներն այնչափ
ներողութիւններէ եւ առաւելութիւն-
ներէ չզգկուին:

2. Բարեպաշտական Միութեան օրիոր-
դաց ընդունելութիւնն եւ միտաները:

3. Մարեմայ Գատերաց Բարեպաշ-
տական Միութիւնն է ժողով զնուո-
րեալ կուսանաց ընդ դրօշակաւ ամե-
նասուրբ կուսին Մարեմայ, որոնց
նպատակն է՝ ինչպէս որ ըստեցաւ,
փախչել ի չարեաց, իբրեւ բարի օրի-

որդներ յառաջանալ քրիստոնէական
բարեպաշտութեան, ագանելեաց հա-
մեսուութեան եւ իրենց անձնական
պարտաւորութեանց մէջ, ամենասուրբ
կուսին եւ Ս. Ազնէսի պաշտպահու-
թեան եւ Բարեպաշտական Միու-
թեան կանոնաց միջնորդութեամբը:

Մարեմայ Գատերաց Բարեպաշտա-
կան Միութեան մէջ թէպէտ (բաց ի
վարչուհիէն եւ փոխ - վարչուհիէն)՝
միայն օրիորդները կրնան ընդունուիլ,
սակայն Մարեմայ Գուստոր մ'եթէ ա-
մուսնական վիճակն ընդունուելու կո-
չուսուի՝ թէեւ Մարեմայ գրօշին ներքեւն
զինուորով կուսանաց խմբին ալ չի
վերաբերի, այսու ամենայնիւ միշտ կը
մնայք Քոյր Բարեպաշտական Միութեան
եւ իրաւամբ անոր հոգեւորական բա-
րեպաշտ կը մասնակցի:

— Աբտաքուստ կրնայ կրել միտալ,
երբ հրաւիրուի առանձնական ժո-
ղովոց:

Այս Բարեպաշտական Միութեանս
կանոններէն ոմանք հասարակաց՝ եւ
ոմանք առանձնականաց համար են,

Հասարակաց համար եղածները բոլոր
 քրիստոնէից կը հային, որպիսի են
 կրթութիւն առաքինութեան, փախ-
 չել ի մեղաց եւ անոր վտանգներէն,
 աղօթք, Ս. Խորհուրդները եւ այլն,
 ասոնք ոչ միայն Մարեմայ Գուստորս-
 ները կը պարտաւորեն, այլ իբրեւ
 պատուիրան բոլոր քրիստոնէից հրա-
 մայուած են, որոնք իրենց յատիտե-
 նական փրկութիւնն ապահովել կ'ու-
 զեն, իսկ առանձնականները՝ որոնք շատ
 քիչ եւ Մարեմայ Գոստերաց համար
 են, ասոնք են՝ օրինակի աղադաւ ինչ
 ինչ ժամանակներ վկէն միտալ կախել,
 Եղբայրութեան ժողովներուն եւ սեպ-
 հական պաշտամնոց յաճախել, գոնէ
 ամիսն անդամ մը Բարեպաշտական
 Միութեան բարւոյն համար հաղոր-
 դուիլ, աղօթել եւ օգնել կենդանի
 եւ ամէն մեռած Քերց, եւ նոյնպիսի
 բաներ, ինչպէս որ յետոյ պիտի տես-
 նուի: Բայց այս առանձնական կա-
 նոններս խղճի վրայ ամեննեւին պար-
 տաւորութիւն չեն գներ, անոր համար
 անոնց զանցառութիւնն ալ եւ ոչ իսկ

ներելի յանցանք է. ի վերայ այսր
 ամենայնի Մարեմայ Գոտերը ջանալու
 են որ երբ բանաւոր արգելք չունին՝
 յիշեալ կանոնները ձշդիւ պահեն, որով
 իրենց սէրն երկնային Մօրը ցուցրնեն
 եւ մասնակցին այնչափ բարեաց, որոնց
 մովլի է իրենց Բարեպաշտական Միու-
 թեանը:

Ասկէ ինչ կը հետեւի. 1. Թէ օրի-
 որդ մը Մարեմայ Գոտերաց Միու-
 թեան գրուելով՝ իւր աղատութիւնը
 բնաւ չի կրօնցցըներ, թէ վիճակի ըն-
 տրութեան նկատմամբ, թէ իւր զբաղ-
 մանց, կամ նոյն իսկ այնպիսի զուար-
 ձութեանց մասին որոնք անոր յատաջ
 ներեալ էին: 2. Ինք զինքը պէտք չէ
 արգաբացընել Բարեպաշտական Միու-
 թեան գրուելով՝ պատրուակելով որ
 անոր կանոնները շատ իփստ են. մինչ-
 դեռ ինչպէս տեսնուեցաւ. յիշեալ
 Միութիւնն ուրիշ բան չի հրամայեր՝
 բայց եթէ ինչ որ Յիսուս Քրիստոս եւ
 Եկեղեցին ամէնուն պատուիրած են
 փրկուելու համար, եւ քանի մը շատ
 դիւրին միջոցներ՝ իւրաքանչիւրին փրկ-

կութիւնը բոլորովին ապահովցրնելու
համար:

Մարեմայ Գատերաց Բարեպաշտա-
կան Միութիւնն՝ որ Ա. Ագնէսի մայր
եկեղեցւոյն մէջ հիմնուած է Հռոմէն
դուրս, կոչուած է Գլխաւոր Միութիւն
Մարեմայ Գատերաց՝ ընդ պաշտպա-
նութեամբ Անարատ Կուսին եւ Ա.
Ագնէսի կ. եւ Ա.:

— Նոյն Միութիւնը կը կազմուի.
1. Հետամուտներէ, որոնք իբրեւ նոր-
րնայ կը ցանկան ըլլալ Գուսար Մա-
րեմայ. 2. Մարեմայ Գուսարներէ: Կը
կառավարուի եւ կը խնամուի Քահա-
նայէ մը, որ վարչի տիտղոսն ունի, եւ
պաշտոնեաներէ, այսինքն՝ վարչուհիէ
մը, փոխ-վարչուհիէ մը, գահերէցէ
մը, երկու առաջականներէ, երկու կամ
չորս խորհրդականներէ, հետամուցց
վերակացուէն, քարտուղարէ մը, եւ
գանձապետէ մը, որոնք Բարեպաշտա-
կան Միութեան գաղանի խորհուրդը
կը կազմեն: Փոխ-վարչուհուոյն պաշ-
տօնն է օգնել վարչուհուոյն, ուրիշ
բեռ ալ յանձն առնուլ կրնայ, բաց ի

գահերիցու պաշտօնէն, վարչուհին
ալ զանձապետ չի կրնար ըլլալ:

Գիտնալու է որ վարիչն եթէ պատ-
շաճ համարի՝ կրնայ այս պաշտօնեա-
ներէս մէկը զանց առնել, բաց ի վար-
չուհիէն, գահերէցէն, օգնականներուն
մէկն եւ հետամուից վերակացուէն:
Խզայրութեան մը վարիչը ժողովը-
դապետական եկեղեցեաց մէջ ժողո-
վըրդապետը պիտի ըլլայ, միւս եկե-
ղեցեաց կամ մատրանց մէջ անոնց
մեծաւորը՝ կամ երկուքին մէջ ալ
յիշեալ քահանաներէն ընտրուած
պարզ քահանայ մը. իսկ աղքատնե-
րուն եւ աղջկանց կրթութեան խնամ
տանող վանաց մէջ՝ զով որ մեծաւորու-
հին կընարէ. այս ըստածները միայն
այն ատեն կ'արժեն, երբ տեղական
եպիսկոպոսն այլազգ չի տրամադրեր:

Ե. Որպէս զի օրիսրդ մը ընդունուի
իբրեւ հետամոււմ՝ որոշեալ տարիք չի
պահանջուիր, եւ ոչ իսկ կը խնդրուի
որ առաջին Հաղորդութիւնն առած
ըլլայ. բայց կը պահանջուի որ 1. ա-
մենաստրը Կուսին մասնաւոր ջերմե-

առնպութիւն մը ցուցընէ . 2. իւր բարբն այնպիսի պիտի ըլլայ՝ որ առաջքինի ըլլալու ընյաներ տոյց . 3. վարչէն կամ վարչուհին պիտի խնդրէ իբրեւ հետամուտ ընդունուելու . 4. գոնէ ամիսն անդամ մը ժողովշն այցելութիւն ըրած պիտի ըլլայ . 5. վերջապէս գաղտնիքուէարկութեամբ նպաստաւոր ձայնից մեծամասնութիւնը շահած պիտի ըլլայ :

— Հետամոնից ընդունելութիւնն ամէն ժամանակ կրնայ ըլլալ . սակայն նախամեծար . համարելու է՝ Ա . Առատուածածնի տօներէն մէկը կամ այն օրը երբ ժողովք կ'ըլլայ : — Հետամուսներն իրենց զգէն կանանչ ժապաւինաւ մը բարեպաշտական Միութեան միտալը կը կամեն , եւ անոնց փորձոյ ժամանակն երեք ամէն նուազ պիտի չտեւէ :

Իսկ որպէս զի հետամուտ մ'ընդունուի Մարեմայ Գատերաց մէջ , կը խնդրուի որ 1. առաջին Հաղորդութիւնն առած ըլլայ . 2. մասցած րւայ բարեպաշտական Միութեան մէջ

առ նուազն երեք ամիս . 3. ցուցըցած ըլլայ ճշմարիտ բարեպաշտութիւն , չերմեռանդութիւն եւ առաքինի վարք մը , Ա . Խորհրդոց եւ գոնէ ամսական ժողովոց յաճախած ըլլայ . 4. գաղտնիքութեան մէջ նպաստաւոր ձայնից մեծամասնութիւնը վաստիկած ըլլայ : — Մարեմայ Գատերաց ընդհանուր ընդունելութիւնը կը կատարուի Անարատ Յուութեան եւ Ա . Ագնեսի տօներուն . նոյնպէս Մարեմայ ամուսնիքը օրն : Իսկ մասնականներն եւ կամ նուազ հանդիսականներն ամենասուրբ կուսին միւս՝ չորս գլխաւոր տօներուն :

է . Գլխաւոր եւ միւս բարեպաշտական Միութեանց վերաբերող Մարեմայ Գատերաց մէջ եղած տարբերութիւնը վարչէն օրհնուած միտալին երկնագպյն ժապաւէնին վրայ է : Կոյն միտալին ուղեղ կողման վրայ Անարատ կուսին պատկերը դրոշմուած է , եւ այնպիսի գրից մէջ որ իւր Գուստարներն ընդունիլ կ'ուզէ (որպէս Ա . Ագնեսէն իրեն ներկայացնուած են , հետեւեալ

գրութիւնն ալ վրան կը կրէ. “Մայր քու աչուըներդ մեզի գարձուր . . . հակառակ կողմի գրուած է Մարեմայ անունն եւ անոր ներքեւն Յիսուսի եւ Մարեմայ Սրբերը, որոնք տասուերկու աստղներով եւ հետեւեալ գրութեամբ շրջապատուած են — “Եզրայրութիւն Մարեմայ Գատերաց ընդ պաշտպանութեամբ եւ Անարատ կուսին եւ Ս. Ագնէսի կ. եւ Ս. . . : — Պիստ. Հռոմայ Ս. Ագնէսինը “Գլխաւոր անուանեց . եւ ներողութիւններով հարստացուց :

Պէտք է միտ գնել որ Ս. Ագնէսի Գլխաւոր Միութեան հետ միացած Բարեպաշտական Միութեանց վարիչները միայն իշխանութիւն ունին միտաներն օրհնելու եւ զանոնք Եզրայրութեան անդամոց տալու լիակատար ներողութեամբ “մահուան ժամուն” , որոնց մէջ (ինչպէս Պիստ. թ. . ի ձեռամբն հաստատուած է 1867 Մարտ 26ին) Երանելի Մարեմայ կուսին եւ Ս. Ագնէսի պատկերը քանդակուած են , ինչպէս որ Գլխաւոր Միութեան միտակն վրայ կան . . . : Այն իշխանու-

թիւնն ուրիշին չի կընար յանձնուիլ . վարիչներն եթէ տարբեր անձ մը հրաւիրել ուղեն , միտաներն յառաջուընէ կ'օրհնեն , կամ ընդհանուր վարչէն անոր համար իշխանութիւն կը խնդրեն :

Բարեպաշտական Միութեան յառաջուկ զգեստը (բայց էական չէ) արտաքոյ կարգի գիպաց մէջ , թափորներու մէջ եւ այլն , է սպիտակ շրջազգեստը՝ որուն վրայէն երկնադպյան ժապաւէն մը իբրեւ գօտի կը կապուի եւ ծայրերն ձախ կողմէն կը կախուին , բաց աստի սպիտակ կրկնոց մ'ալ պէտք է : Վարչուհւոյն , փոխ-վարչուհւոյն , եւ Մարեմայ իւրաքանչիւր հասակաւոր Գատերաց ներեալ է սեւ կրկնոց գործածել՝ ամէն անդամ որ երիտասարդ օրիորդները սպիտակ զգեստ կը զգենուն :

Միտալը՝ որ է նշանակ Բարեպաշտական Միութեան , բոլոր անդամները պարտական են կրելու իրենց ամէն ժողովոց եւ գումարմանց ատեն , ընդհանուր Հաղորդութեանց , թա-

փորներուն եւ Բարեպաշտական Միութեան ուրիշ հանդիսութեանց ժամանակը, եւ այս ի կանոնէ է: Ծառ գովելի է եւ ջերմապէս կը յանձնուի որ նոյն միտալն յիշեալ օրիորդներն առանձնապէս եւ հրապարակաւ կրեն, ինչպէս որ անսնցմէ շատերն նոյն իսկ ամենէն բազմամարդ քաղաքներուն մէջ այս առվլորութիւնս կը պահէն: Եթէ աշխարհիս որդիները կը պարծին որ ամենուն աչաց առջեւն իրենց ազնուականութեան նշանները կը կրեն, քրիստոնեայ օրիորդները, որոնք իշրենց պարծանք կը համարին Մարեմայ Գոտերաց գեղեցիկ տիտղոսն ունենալը, ինչու պէտք են ամենալ այն միտալին վրայ, որ իրենց Սորն եւ Փրկչին պատկերը կը կրէ: Այս երկրորդ գեղեցիս մէջ միտալին գործածութիւնն եւ անոր թոյլառութիւնը վարչաց իմաստութեան կը վերաբերի, որոնցմէ այս նկատմամբս մեծ խոհեմութիւն կը պահանջուի. եւ երբոր տեսնեն թէ այս արտաքին նշանս փոխանակ անդամանկից օրիորդաց օգուտ

ընելու (եւ այս ուրիշ արտաքին նշաններու համար աւ պէտք է ըստել) որ եւ իցէ եղանակաւ վասակար կ'ըլլայ եւ զանանք իրենց բարի սովորութենէն կը հեռացընէ, վարիչները պէտք չեն թոյլ տալ օրիորդաց միտալին գործածութիւնը, մանաւանդ թէ համազելու են զանանք, որ այս սովորութենէս ետ կենան եւ միայն ի կանոնէ պատուիրած ժամանակներն յայտնապէս միտալ կրեն: Լաւագոյն է չափաւորով գոհ ըլլալ, քան շատ պահանջնելով հեռանալ այն վախճանէն, որուն համար այս եղայլութիւններս հաստատուած են:

3. Բարեպաշտական Միութեան ժողովսները:

- Սովորաբար տաղին երեք անդամ Մարեմայ Գոտերը կը գումարուին.
- Պաշտօնէից ընտրութեան ատեն.
- Բարեպաշտական Միութեան գործոց վրայ խորհուրդ ընելու ատեն.
- Երբոր Բարեպաշտական Միութեան անդամներն իրենց ջերմեռանդական

գործոց վրայ համար տան: Ուստի այս
հատածին մէջ պիտի խօսինք՝ 1. Պաշ-
տօնէից ընտրութեան, 2. Խորհրդեան.
3. Գումարմանց վրայ:

1. Պաշտօնէից ընտրութեանը: Ամէն
տարի Ընարար Յղութեան տօնէն
վերջն եկող առաջն կիրակին պաշ-
տօնէից ընտրութիւնը կը կատարուի,
որսնք իրենց պաշտամանց մէջ տարի
մը կը մնան: Վարիչն իշխանութիւն
ունի վարչուհին եւ փոխ-վարչուհին
ընտրելու. միւս պաշտօնեայք կ'ըն-
տրուին ներկայ եղող Մարեմայ Դրա-
տերաց գաղտնի քուէից առաւելու-
թեամբը:

Այն ընտրութեանց օրն որոշ է.
Բայց եթէ հարկ ըլլայ ուրիշ օրուան
փոխոդրել, նախընթաց ժողովներուն
մէջ յառաջուրնէ պէտք է զեկուցանել:
— Տարին ըստալէն ետեւ յիշեալ
պաշտօնեաներն կրնան իրենց պաշ-
տամանց մէջ հաստատուիլ՝ եթէ յար-
մար գատաւին:

Պաշտօնեաներն ընտրելու եղանակն
հետեւեալնէ. վարիչը՝ վարչուհիոյն եւ

գահերիցուն հետ միատեղ կամ ա-
նոնց բացակայութեան ժամանակը՝
ներկայ եղող երկու առաջին արժա-
նաւորագոյններուն հետ ամէն պաշ-
տօնի համար երկու թիկնածու կ'ա-
ռաջարիէ Մարեմայ Դատերաց, իմա-
ցընելովլ թէ որուն վրայ քուէարկել
պէտք է: Եթէ առաջարկեալն ունենայ
նպաստաւոր քուէից մեծամասնու-
թիւնը, և ընտրեալ առ այն պաշտօն,
ապս թէ ոչ՝ ընտրեալն երկրորդն է:
Եթէ քուէներն բաժնուած են, քուէ-
արկութիւնը կը կրնուի, եւ եթէ ա-
սոր մէջ ալ ձայնից հաւասարութիւն
գտնուի, երկու թիկնածուաց անուն-
ները տփի մը մէջ կը գրուին, եւ այն
թիկնածուն, որուն անունը կը հա-
նուի, է սահմանեալ այն պաշտօնին:

Բայց ի վերսիշեալ կերպէն՝ պաշ-
տօնեաններուն ընտրութիւնը հետեւե-
ալ եղանակաւ ալ կրնայ ըլլալ: Վա-
րիչը՝ վարչուհիոյն եւ գահերիցուն
ներկայութեամբը Մարեմայ Դրաւարը-
ներէն կ'ընդունի ընտրութիւնները
գրաւոր կամ բերանացի (բայց գաղտ-

նի): — Երբեմն ընտրութիւնը կրնայ ընդունուիլ նաեւ միաբան հաւանութեամբ ինչպէս որ երբեմն միաբան հաւանութեամբ բարեպաշտական Միութեան հետամունքները:

դայն կը համարի, բայց ի պաշտօնէից
ընտրութեան գէպքէն: Յէկավէտ խոր-
հըրդոյն կ'ինայ գալղանի ձայնիւ ըն-
դունիլ Եղբայրութեան հետամուտա-
ներն եւ Մարեմայ Գուսարները,
սակայն վարիչն առանձին ալ զայս
կրնայ ընել: Բայց միայն քանի մը
դիպայ մեջ բանաւոր պատճառներու
համար եւ ոմանց համար, (ամէնուն
համար չէ, խորհրդոյն իրաւունքն ա-
նարաս պահելու է) միայն թէ աղջը-
կունք այն խորհրդէն մերժուած ըլ-
լալու չեն, եւ այն արտօնութիւնը
միայն հոգեւոր վախճանի համար
պէտք է ըլլալ: Ապրիչը կրնայ ըն-
դունիլ նոյնակէս միայն այս վախճանաւ՝
օրիորդ մը Մարեմայ Գասերաց մեջ՝
առանց քուէարիկութեան եւ ընտրու-
թեան հանդիսաւթեան, մասնաւոր եւ
ոչ սովորական պատճառներ յառաջ
բերելով՝ ինչպէս եթէ հեռու ըլլայ
այն օրիորդը, եւ ժողովոց եւ նոյն-
պիսեաց յաճախ չկարենայ ներկայ
գտնուուիլ: — Դարձեալ վարիչն իշ-
խանութիւն ունի Մարեմայ Գասերաց

մէջ գրելու շատ հիւանդոս հետամուտ
մը՝ առանց խորհրդոյն գաղանի քուե-
արկութեան, թէեւ փորձի ժամանակը
տակաւին լրացուցած չըլլայ. այս ի-
րաւունքս կրնայ ի գործ գրուիլ այն
հիւանդ օրիորդաց համար, որոնք կը
բաղձան մեռնիլ զարդարուած Անա-
րատ կուսին Դուտերայ գեղեցիկ տիտ-
ղոսաւն :

Եթէ օրիորդ մը՝ որ հեռաւոր երկրի
մը մէջ կը գանուի, եւ մասնաւոր
ջերմեւանդութիւն ունիառ Ս. Ագնէս,
ուզէ վերաբերիլ Գլսաւոր Բարեպաշ-
տական Միութեան եւ մասնակցիլ
սուրբ Ներողութեանց, եւ հեռաւո-
րութեան կամ ուրիշ բանաւոր պատ-
ճառի համար չի կրնայ ներկայ ըլլալ
ժողովոց եւ պաշտամանց, Գլխաւոր
Բարեպաշտական Միութեան վարիչը
կրնայ զանիկա իրեւ Դոււար Մարե-
մայ ընդունիլ առանց քուէարկու-
թեան կամ ընդունելութեան հան-
դիսութեան. անոր անունը ցանկի մէջ
առնու, տայ անոր շնորհագիրն իրեւ
անդամ Եղբայրութեան, նոյնպէս

գրքոյին եւ օրհնեալ միտալն, եթէ
այս վերջինն ուրիշ Բարեպաշտական
Միութեան մէջ չէ ընդունած : —
Սակայն այսպիսի եղանակաւ անդամ
գրուողները բնաւ տիտղոս կամ պաշ-
տօն չեն կրնար ունենալ :

3. Ժամանութեան : Որչափ որ կարելի է
ամէն շաբաթ ժողովը պիտի ըլլայ, որ
շաբաթական կը կոչուի, որուն գա-
հերեցը սովորաբար վարչուհին կ'ըլ-
լայ : — Ամէն ամայ առաջին Կիրակին
ընդհանուր ժողով կը գումարուի, որ
ամանական կը կոչուի, սակայն նոյն ժո-
ղովը կը գումարուի նաեւ ամենասուրբը
կուսին մասնաւոր հինգ տօներուն,
Ս. Ագնէսի տօնին եւ Եկեղեցւոյ
գլխաւոր տօներուն, եւ եթէ կարելի է
ասոնց նախագահը վարիչն ըլլալու է :
— Ժամանութեան ետքը գանձապետը գրամ
կը ժողովէ անդամներէն՝ ի նպաստ մա-
տրան, Բարեպաշտական Միութեան
ծախըերն հոգալու եւ ննջեցելոց օգ-
նելու համար :

4. Բարեպաշտական Միութեան եւ Մպ-
րեմայ Դատերաց պարտաւորութիւնը :

Պարտաւորութեանց վրայ խօսած
ժամանակ՝ չէնք իմանար որ անդամ-
ներն ի կանոնէ ամենափոքր յանցան-
քով պարտաւորուին, սակայն ինչպէս
որ չկայ հաստատութիւն մը որ առ իւր
անդամն մասնաւոր պարտաւորութիւն-
ներ չունենայ, ինչպէս եւ անդամներն
ալ հաստատութեան նկատմամբ անոր
համար պատշաճ է որ երկուքին վրայ
ալ խօսինք համառօտիւ : 1. Ամէն
Բարեպաշտական Միութիւն ամէն
տարի ամենահանդիսական արարողու-
թեամբ իւր գլխաւոր տօները կը տօնէ,
այսինքն ամենասուրբ Կուսին եւ Ս. Ա-
գնէսի տօները : Մարեմայ Գատերաց
պարտքն է այս երկու տօներս ամենա-
մեծ ջերմեռանդութեամբ տօնելու :
2. Անարատ Յղութեան տօնին պիտի
ջանայ Եղբայրութիւնն իւր սեպհական
կենդանի անդամոց համար պատարագ-
մը մատուցանել տալ, եւ ուրիշ մըն
ալ համօրէն ննջեցելոց օրը՝ ննջեցեալ
Քերց համար, որոնք կամ Գլխաւոր

Բարեպաշտական Միութեան, կամ ա-
նոր հետ միացող միւս Միութեանց
անդամ եղած են . եթէ Քոյրերէն
մէկը մեռնի՝ Եղբայրութիւնն անոր
հոգւոյն համար ձայնաւոր կամ թիւ
պատարագ մատուցանել պիտի տայ:
Կոյնակս պէտք չեն պակիլ Մարեմայ
Գատերք վերսիշեալ իւրաքանչիւր
դիպաց մէջ իրենց Քոյրերուն՝ սուրբ
Հաղորդութեամբ օգնելու :

3. Բայց աստի՛ Միութեան անդամք
ամէն ամիս ընդհանուր եւ կամ ամև
սական ժողովքին օրը Բարեպաշտական
Միութեան խորանին վրայ ընդհանուր
Հաղորդութիւնը կ'առնուն Մարեմայ
բոլոր Գատերաց համար, որոնք իրեւ-
անդամ Եղբայրութեան Ս. Ագնէսի
գերեզմանին վրայ կը հանդչին, նոյն-

1 Պէտք է գիտնալոր Գլխաւոր Բարեպաշ-
տական Միութեան խորանին եւ միւս Բարե-
պաշտական Միութեանց խորաններուն վրայ
ննջեցեալ Քերց համար մատուցուած բոլոր
պատարագները այսիկս կը նպաստեն, իրեւ
թէ արտօնեալ խորանի մը վրայ մատուցուած
բլային : (Տեսներողութեանց ցանկը, [թիւ 53:]

պէս գլխաւոր Բարեպաշտական Միութեան բոլոր անդամներուն համար:

4. Նոյնպէս վարիչն եւ վարչուհին պիտի ջանան որ Մարեմայ Դասերքը ըլան բարի օրինակ եւ կանոնաւոր կեանք մը անցընեն: Ամէն օր առաւօտեան եւ երեկոյեան ազօթքներն ընեն, եթէ կարելի է՝ ամէն օր սուրբ պատարագին ներկայ գտնուին. սուրբ վարդարանն ըսեն. Ս. մատածութիւր կամ քանի մը բարեպաշտական խորհրդածութիւններ և հոգեւորական ընթերցուածն եւ ընդհանուր եւ մասնական խղճի մտաց քննութիւնն ընեն. նոյնպէս գէթ տան մէջ՝ այցելութիւն ընեն ամենասուրբ Հաղորդութեան, ամենասուրբ կուսին եւ Ս. Ագնէսին իրենց պաշտպանին, եւ վերջապէս պէտք չեն մոռնալ առառու եւ իրիկուն երեք Ողջոյն ըսելու Անարատ կուսին հետեւեալ պայտական աղօթիւքը. “Մայր իմ ամենամաքուր, պահէ զիս մահացու մեղքէ:”

Ամէն շաբաթ կամ ամէն տասնուհին օր, կամ գոնէ ամէն ամիս՝ խոս-

տովանանքը ըլան եւ սուրբ Հաղորդութեան մերձենան. շաբաթն անդամ մը ամենասուրբ կուսին ժամերգութիւնն եւ պատին ըսեն, իսկ շաբաթօրն ամենասուրբ կոյսը մասնաւոր կերպով մեծարելու են:

Ամէն ամիս ընդհանուր Հաղորդութեան եւ ամասկան ժողովոյն ներկայ գտնուին. կամ միատեղ եւ կամ առանձին՝ օր մը հոգեւորական կրթութիւն ընեն:

Ամէն տարի եթէ կարելի է՝ գոնէ չորս օր հոգեւորական կրթութիւն ընեն, եւ նոյն ատենը լաւ խոստովանելու համար իրենց խղճի մտաց ձչդրիտ քննութիւն մ'ընեն. Քրիստոսի եւ Մարեմայ գլխաւոր տօներաւն պատրաստութեան համար իննօրէքներ ընեն, իսկ ի պատրաստութիւն Ս. Ագնէսի տօնին գէթ երեքօրէք մ'ընեն. Մայրին՝ մասնաւոր կերպով ամենասուրբ կոյսը պէտք են պատուել:

Վերջապէս ամէն ժամանակ իրենց վիճակին ամենափոքր պարտաւորութիւններն ալ ամենայն փութով կա-

տարելու են, ի մասնաւորի իրենց
ծնողքը պիտի մեծարեն եւ անոնց
պիտի հնազանդին. ժամանակը լսւ
գործածեն, փախչեն դատարկութե-
նէն, որ է մայր ամէն մնլութեանց.
փորձութեանց եւ վտանգաց մէջ շու-
տով մը Աստուծոյ եւ Մարեմայ կու-
սին դիմեն, չար ընկերութիւններէ,
անվայել խօսակցութիւններէ, գէշ
դրոց ընթերցմանէ, անվարկեշտ եւ
անկրօն վէպերէ, երկայն եւ վտան-
գաւոր սիրալիլ խօսակցութիւններէ,
խառն կառաւներէ պէտք են խորշել.
նոյնավէս զգուշանալու են արտաքոյ
կարգի պճնափրութենէ եւ անապատ-
շամ զգեստներէ, վտանգաւոր բանակ-
ցութիւններէ եւ աեսարամններէ,
հրապարական խրախութիւններէ,
եւ այլն. ընդհակառակն ջանան որ
իրենց կեանքն ըլլայ շարունակեալ
կրթութիւն մը քրիստոնէական առա-
քինութեանց, ի մասնաւորի խոնար-
հութեան, մաքրութեան, սիրոյ եւ
հնազանդութեան առաքինութեանց :

Գ Լ Ո Ւ Խ Պ Գ .

ԳԼԽԱԿՈՐ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՃԻՍԱՐԱՆԸ

1. Ընդունելութիւն Օրիորդաց իսպեւ չե-
տամուտ :

Որոշեալ ժամուն բոլոր անդամները
ժողովոյ աեղք կը գումարուին, օրիորդն
իւր սովորական զգեստներն հագած՝ խո-
րանին առջև ծուր կը դնէ:
Վարին հետեւեալը կըսէ.

Եկ Սուրբ Հոգի, լից զսիրտս հաւա-
տայելոց քոց, եւ վառեա զհուր սիրոյ
քո ի նոսա:

Հ. Առաքես զՀոգի քո եւ ստանա
զնոսա:

Պ. Եւ նորոգես զերեսս երկրի:

Ա Ծ Բ Ն + :

Աստուած, որ Հոգւոյն Սրբոյ լու-
ստորութեամբը հաւատացելոց սրտե-

ըր լուսաւորեցիր, տուր մեզի որ նոյն
Հոգւով ուղիղ բաները դիմանիք, եւ
միշտ անոր միմիթարութեամբն ուրա-
խանանիք։ Տերամբ մերով Յիսուսիւ
Քրիստոսիւ.

Պ. Ամէն։

Յետոյ վարիչն աթոռոյն վրայ բազմած
հետեւեաները կը հարցնէ օրիորդին։

Վարիչ։ Ի՞նչ կը խնդրես, դուստր
իմ։

Օրէրդը. Հայրիմ, կը խնդրեմ ըն-
դունուիլ Մարեմայ Գատերաց Բարե-
պաշտական Միութեան հետամտիցմէջ։

Վ. Այս Բարեպաշտական Սիու-
թեանս կանոնները կը ձանչնաս, եւ
զանոնիք պահելու պատրահան ես, որպէս
զի յետոյ Մարեմայ Գատերաց մէջ ըն-
դունուելու արժանանաս։

Օ. Զանոնիք կը ձանչնամ եւ կը
յուսամ որ Աստուծոյ օդնականու-
թեամբն եւ ամենասուրբ Կուսին եւ
մեր պաշտպանին՝ Ա. Ագնէսի բարե-
խօսութեամբը զանոնիք ճշտիւ պահեմ։

Վ. Աստուծած դիմաւորութիւնդ
օրհնէ. դուն ալ ինք զինքդ այսու-

հետեւ քու սիրելի Մօրդ՝ Մարեմայ
ծառայութեանը նուիրէ, նոյնպէս ի
բոլոր սրտէ նուիրմաններդործութիւնը
կատարէ։

Ներդորժութեան նուիրման առ Մարիամ։

Ահաւասիկ քու սաքդ ինկած՝ ով
անարատ Մարիամ, շնորհակալ կ'ըլ-
լամ քեզի որ զիս Բարեպաշտական
Միութեան հետամտից ժժուոյն մէջ
ընդունեցար, եւ քեզի կը յայսներ
իմ արտիս ջերմ բաղձանիքն օր մը քու
անձկալ Գատերացդ մէջ ընդունուելու։
Այս մեծ շնորհայս արժանանալու
համար հաստատապէս կ'առաջադրեմ
քու առջեւդ, որ բոլոր զօրութեամբն
պիտի աշխատիմ որ իմ ջերմեռան-
գութեամբս, ընկերափութեամբս եւ
հնագանդութեամբս ըլլամ շնութիւն
իմ ընկերացս, եւ վաստրկիմ այն ա-
ռաքինութիւնները, զորնկ դուն քու
Գուստրներէդ կը պահանջես։

Բայց, ով Մարիամ, դուն իմ ժե-
թեւամութիւնս եւ անհաստատու-
թիւնս կը ձանչնաս։ Ուրեմն օգնէ

ինծի, ով իմ հզօր փաստաբանս, եւ ընդունէ ինծի քու աստուածայիլն Որդիկադ յարատեւութիւն բարի որոշմանցու մէջ, նոյնպէս չնորհք՝ բոլոր կենացս մէջ քեզի հաւատարիմ մնաւ լու, որպէս զի երկրիս վրայ եւ յերկինս քու Դուռսորդ ըլլալու շնորհացն արժանանամ. ամէն:

Վարիչս սաք կ'ելէ, միտալը կ'օրհնէ եւ նուիրելցն վիզ կ'անցլնէ ըսելով.

Ընդունէ այս միտալս իբրեւ գրաւական անարատ կուսին առ քեզ ունեցած սիրոյն: Կը յուսամ որ քու այս երկնաւոր Մօրդ օգնականութեամբը՝ պարառուցդ պահպանութեանը մէջ հաւատարիմ մնաս, որպէս զի կարենաս օր մ'անոր սուրբ զինուրութեան մէջ գրուիլ:

Յետոյ սովորական ժողովքը կը գումարուի:

2. Ընդունելութիւն չետամոնից Մարեմայ Թատերաց մէջ:

Արշեալ ժամունքարեպաշտական լիութեան վերաբերեալ բոլոր օրիորդներն Ա-

նարատ Յզութեան խորանին բոլորտիքը կը ժողովին:

Վարիչս հետեւեալ երգը կը սկսի.

Ո'զի լեր աստղ ծովու,

Մայր Աստուծոյ զըթած.

Դու անարատ միշտ կըս, } կրկ.
Երանեալ Դուռն երկնից: }

Որ առեր զողձոյն զայն

Ի'երանոյ Հրեշտակին.

Փոխեալ զանուն Եւայ,

Տուր մեզ վիսաղաղութիւն: } կրկ.

Լոյծ գիւազանս մեր պարտեաց,

Եւ շնորհեա լոյս կուրաց.

Զմեր չարիս հալածեա՛,

Զհամացն բարիս հայցեա՛: } կրկ.

Ցոյց զի դու ես Մայր մեր,

Քեւ ընկալիի զաղօթու

Որ վասլն մեր ծրնաւ, } կրկ.

Եւ քո որդի եղեւ:

Դու կըս զարմանալի,

Քաղցր քան զամենեսեան,

Զմեզ զերծնի յանցանաց, } կրկ.

Արա սուրբ եւ ըզգաստ:

Տուր մեղ վարս անբիծս,
Հորդեա ուզի անքպյթ,
Զի զՅիսուս մեր տեսեալ՝
Օրհնեսյուք հանապազ: } կրկ.

Գովաշմիւն Հօր վերնոյ,
Փառք մեծին Քրիստոսի
Նոյնպէս Սրբոյ Հոգւպյն, } կրկ.
Երեցունց մի պատիւ.

Ամէն:

Հ. Աղաչեա վասն մեր Սուրբ Աստուածածին:

Պ. Զի արժանի լիցուք խոստմանցն
Քրիստոսի:

Աղջիւ:

Տէր Աստուած, տուր որ մենք քու
աղախիններդ միշտ մտաց եւ մարմնոյ
առողջութիւն ունենանք, եւ փառ
ուսուրեալ Ե. Մարեմայ միշտ կուսին
բարեխոսութեամբն աղատէ զմեղ այժմ
ի արտմութենէ, եւ յաւիտենական
ուրախութեան արժանի ըրէ: Տէրամբ
մերով Յիսուսի Քրիստոսիւ.

Պ. Ամէն:

Հետամուտը վարչուհւոյն եւ հետամ
ափից վերակացուին ընկերակցութեամբը
Մարեմայ խորանին առջեւը կը տարուի
վարչին պատասխաներու համար, որ խո
րանին առջեւը նստած է, եւ անոր հետ
եւեալ հարցումները կ'ուզգէ:

Վարէւ: Դուստր, Բնչ շարժառիմ
զքեղ ամենասուլը Կուսին խորանին
առջեւը կը բերէ:

Հետամուտը. Հայր, Մարեմայ Գլու
տերաց մէջ ընդունուելու ջերմ բաղ
ձանքն է:

Վ. Կը խոստանամ պահպանել
հաւատարմաբար Անարատ կուսին
Դոսերաց կանոններն եւ Բարեպաշտ
ական Միութեան բոլոր ջերմեւան
դական սովորութիւնները:

Հ. Այս, Հայր, կը խոստանամ շնոր
հօքն Աստուծոյ եւ բարեխօսութեամբ
Անարատ կուսին եւ Ա. Աղնէսի կուսին
պահել զանոնք հաւատարմութեամբ:

Վ. Կը խոստանամ դարձեալ աշ
խատիլ ստանալու այն առաքինու
թիւնները, որնցմով Մարեմայ Գլու
տերներն պէտք են փայլիլ, ի մաս
նաւորի մաքրութիւնը, խոնարհու

թիւնը, հնաղանդութիւնն եւ ընկերութիւնը:

Հ. Այս, Հայր, կը խոստանամ որ ամենայն փութով պիտի աշխատիմ այս առաքինութիւններս գործադրելու անարատ Մօրս նմանելու համար:

Վ. Պատրաստ ես ինք զինքդ Մարեմյ ընծայելու:

Հ. Այս, Հայր, իմ փորձի ժամանակիս մէջիմ միակ բաղձանքս այս եղաւ:

Վ. Արդ, ըստ քու կենդանի բաղձանացդ եւ լաւ արամագրութեանցդ, զսրոնք կը յայտնես, մենք զքեզ ուրախութեամբ Մարեմյ Գատերայ մէջ կ'ընդունինք: Եւ որպէս զի քու խոստումներդ աւելի նուեիրական եւ հանգիսական ըլլան, քու Քերցդ ներկայութեամբն ըրէ առ ամենասուրբ Կոյսն նուիրմանն ներդործութիւնն:

Կերէ ուրժութիւնն նուեիրման առ Մարիամ.

Ո՛վ Մարիամ, յլացեալ առանց, արատոյ այսօր ինք զինքս առանձինն քու պաշտպանութեանդ յանձնել ուղելով կ'ընտրեմ զքեզ իմ պաշտ-

պանս, իմ փաստաբանս, իմ Տիրուհիս եւ Մայրս: Ոտիցդ առջեւն ինկած հաստատութեամբ կ'առաջադրեմ որ բոլոր զօրութեամբ պիտի ջանամք քու փառքդ յառաջացընելու եւ քու Ծերմեռանդութիւնդ տարածելու: Այսուուրնեւ սկսեալ կ'ուզեմ յայտնապէս խոստվանիլ որ քեզի կը վերաբերիմ, քու շառաղցդ վրայէն պիտի ընթանամ, քու առաքինութեանցդ պիտի նմանիմ, ի մասնաւորի քու հրեշտակային մաքրութեանդ, քու խորին խոնարհութեանդ, քու կատարեալ հնազանդութեանդ եւ անհման ընկերութեանդ: Այսչափս կը խոստանամ հանդիսապէս քու խորանիդ եւ երկնից բոլոր սրբոց առջեւ: Ընդունէ ինձի, ով քաղցր Մայր, այն շնորհը որ բոլոր կենացս մէջ այս խոստանցս հաւատարիմ մնամ, որպէս զի յաւիտեանս քու Գուստրդ ըլլալու շնորհայն արժանանամ. ամէն:

Վարիչը ոտք կ'երէ եւ միտալը կ'օրհնէ:

Հ. Օգնական մեր յանուն Տեառն:

Պ. Որ արար զերկինս եւ զերկիր:

Հ. Տէր լուր աղօթից իմոց :
 Պ. Եւ աղաղակի իմ առ քեզ եկեսցէ :
 Հ. Խաղաղութիւն ամենեցուն :
 Պ. Եւ ընդ հոգւոյդ քում :

Աղջիւ .

Ամենակարող եւ ողորմած Աստուած ,
 այն սասափիկ սիրոյն համար՝ որով զմեզ
 սիրեցիր , ուղեցիր որ քու Որդիկ Տէր
 մեր Յիսուս Քրիստոս յերկնից իջնայ
 եւ Հրեշտակին աւետեօքն յարդանդի
 երանուհետոյ Մարեմայ կուսին մարմին
 առնու , որպէս զի զմեզ սատանային
 գերութենէն աղատես . կը իմոդրենք
 քու անսահման կարողութենէդ , որ
 այս միտալու որ ի պատիւ քու Որդւ-
 ոյդ Մօրլ՝ քու հաւատորիմ Եկե-
 ղեցիկդ որբուած է , որհ Քնես եւ
 որ Քը բես , եւ տաս անոր Հոգւոյն զօ-
 րութիւնը , որպէս զի՝ ով որ զայն իւր
 վրան կըէ , կամ տանը մէջ յարդու-
 թեամբ մեծարէ՝ աղատ ըլլայ ամէն
 թշնամիէ եւ հակառակութենէ միշտ
 եւ ամէն տեղ : Կարենայ ներուղութիւն
 վաստիլ ըստ պատուիրանի Հոռմէա-

կան Սուրբ Եկեղեցւոյ , եւ մահուընէն
 ետեւ ամենասուրբ կուսին ձեռօք քեզի
 ներկայանալու արժանանայ լի արժա-
 նեօք : Տերամբ մերով Յիսուսիւ Քրիս-
 տոսիւ քու Որդւովդ , որ քեզի հետ
 կենդանի է եւ կը թագաւորէ յաւի-
 տեանս յաւիտենից . ամէն :

Օրհնութիւն ամենակարողին Աս-
 տուծոյ , Հօր եւ Որդւոյ Ք եւ Հոգւոյն
 Արբոյ իջետի կ վերայ քու եւ միսայէ միշտ :

Պ. Ամէն :

Յետոյ օրհնեալ ջրով միտալը կը սրսկէ
 եւ կը կախէ լսելով .

Ծնդունէ , ով Գուսար , այս ժա-
 պաւէնս եւ այս միտալս իբրեւ նշանա-
 գգեստ անարատ կուսին եւ արտաքին
 նշան քու նուիրմանդ այս գորովակից
 Մօրս : Այս նշանս կրած ժամանակդ
 յիշէ որ վարուցդ անմեղութեամբն
 եւ սրբութեամբը պարտական ես ինք
 զինքդ Մարեմայ արժանաւոր Գուսար
 յուցընելու :

Գրբոյկը տալով կըսէ .

Ընդունէ այս մատեանս , որ կը
 բովանդակէ մեր Միութեան կանոն-

ներն եւ բարեպաշտական սովորութիւնները, եւ զանոնք պահելու միջտհաւատարիմ եղիր:

Յետոյ վարիչը Մարեմայ Դասեր դառնալով ընդունելութեան հետեւեալ ձեւը կ'արտասանէ.

Ես իմ իշխանութեամբս կ'ընդունիմ գ.քեղ Մարեմայ Դասերաց Բարեպաշտական Միութեան մէջ՝ որ է ընդ պաշտպանութեամբ անարատ կուսին եւ Սրբուհի Աղնեսի Կուսին եւ Մարտիրոսին, եւ գ.քեղ նոյն ընկերութեան ամէն հոգեւորական բարեաց մասնակից կ'ընեմ: Անուամբ Հօր ։ Եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ամէն:

Ընդունի գ.քեղ Քրիստոս մեր անդամոց եւ իւր աղախիններուն թուոյն մէջ, եւ այս քեզի ժամանակ լաւ ապրելու եւ առնդ լաւ հոգալու, հաստատութիւն լաւ յարատեւելու, եւ յաւիտենական կենաց ժառանդութեան երջանկապէս հասնելու: Եւ ինչպէս որ զեղ եղայրական սէրն այժմ այս աշխարհիս վրայ հոգեւուրապէս կը միացընէ, նոյնապէս Աստու-

ծոյ գժութիւնն ալ՝ որ է սկիզբն եւ մայր սիրոյ, զեղ յերկինս իւր հաւատացելոց հետ միանալու արժանացընէ: Տերամբ մերով Քրիստոսիւ . ամէն:

Հ. Զօրացոյ զայս, Տէր, զոր հաստատեցեր ի մեղ:

Պ. Ի տաճարէ սրբոյ քումմէ, որ յԵրուսաղէմ:

Հ. Փրկեա՛ զաղախին քո:

Պ. Աստուած իմ, որի քեղ յուսայ:

Հ. Առաքեա նմա, Տէր, զօդնութիւն ի Սրբոյ:

Պ. Եւ պաշտպանեա նմա ի Սիսնէ:

Հ. Աղաչեա վասն մեր, Ս. Աստուածածին:

Պ. Զի արժանի լիցուք խստմանցն Քրիստոսի:

Հ. Տէր, լուր աղօթից իմոց:

Պ. Եւ աղաղակիմ առ քեղ եկեսցէ:

Հ. Խաղաղութիւն ամենեցուն:

Պ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Աղջիւ:

Տէր Աստուած, լոէ մեր պաղատանքն, եւ հաճէ օրհ Քնել քու այս

աղախինդ, զսր մենք Մարեմայ անաւ-
րաստ կուսին Միաբանութեան մէջ ա-
ռախնք, ըրէ որ քու շնորհացդ օգնու-
թեամբը՝ սրբութեամբ, բարեպաշտու-
թեամբ ու երկիւղածութեամբ ապրե-
լով՝ կարենայ մեր կանոնները պահել,
եւ զանոնք պահելէն ետեւ յաւիտե-
նական կենաց արժանանալ: Տերամբ
մերով Յիսուսիւ Քրիստոսիւ ամէն:

Վարչուհին եւ վերակացուն նուիրեան
իւր տեղը կը տանին: Եւ վարիչն համա-
ռօս իրատարանութիւն մը կ'ընէ:

Արարողութիւնը կը վերջանայ Մէծա-
յանցէ երգով կամ որ եւ իցէ հոգեւոր
գովազնականաւ մը:

Լաւագյն կ'ըլլար, եթէ հետամուտը
Մարեմայ Դաստերաց մէջ ընդունուած աւ-
տենն սպիտակ զգեստով ներկայանար,
մէջքը կապուտ գօսի մը կապած, որուն
ծալիւրը ձափ կորմէն կը կախուին, վասն
սպիտակ կոկնոց մը, եւ զլուկը ճերմակ
վարդերէ շինուած պսակ մը:

Պէտք է գիտնալ որ եթէ Մարեմայ
Դաստերը մէկէ աւելի ըլլան, հարցութներն
եւ պատասխաններն, նոյնպէս նուիրանն
ձեւն յոքնակի կ'ըլլան. նշնը կ'արժէ նաեւ
հետամուից ընդունելութեան համար:

3. Շաբաթական ժողովներ:

Ե'կ Սուրբ Հոգի, լից զիրոս հաւ-
ատացելոց քոց, եւ վառեա զիուր
սիրոյ քո ի նոսա:

Հ. Առաքես զՀոգի քո, եւ ստա-
նաս զնոսա:

Պ. Եւ նորոգես զերեսս երկրիս:

Աղջիւ:

Աստուած, որ հաւատացելոց սրտե-
րը հոգւոյն Սրբոյ լրտսաւորութեամբը
լրտսաւորեցիր, տուր մեղի որ նովին
Հոգեւով ուղեղ բաները ճանչնանք, եւ
միշտ անորմիթարութիւնը վայելէնք:
Յիսուսիւ Քրիստոսիւ Տերամբ մերով.
ամէն:

Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք
եւ այլ:

Հ. Ով Մարիամ, յղացեալ առանց
արատոյ:

Պ. Աղաչեա վասն մեր, որ ապաւի-
նիմք ի քեզ:

Հ. Սրբուհի Աղնէս:

Պ. Աղաչեա վասն մեր:

Ասկէ ետեւ հոգեւոր ընթերցուած մը
կը կարդացուի, կամ համառօտ մտածաւ
կան մը կ'ընեն, եթէ լաւագոյն համա-
րուի: Յետոյ վարչուհին կու տայ այն
խորհուրդները, զօրոնք պատշաճ կը հա-
մարի անդամոց եւ բարեպաշտական Միու-
թեան համար:

Յետոյ կըսուի.

Ընդ հովանեաւ պաշտպանութեան
քո ապաւինիմք, Սուրբ Աստուածա-
ծին, զաղաչանս մեր մի անտես առներ
ի կարիս մեր. այլ փրկեա զմեզ յամե-
նայն վտանգից փառաւորեալ եւ օր-
հնեալ միշտ կոյս. ամէն:

Հ. Արքունիկ Կոյս, արա զիս արժա-
նի գովվէլ զքեզ:

Պ. Տուր ինձ զօրութիւն ընդդէմ
թշնամեաց քոյց:

Հ. Յիշեա զմիաբանութիւն քո:

Պ. Զոր ստացար ի սկզբանէ:

Հ. Աղաշեսցուք վասն բարերարաց
մերոց:

Պ. Տէր, չնորհեա ամենայն բարե-
րարաց մերոց յանուն քո՝ զկեանս
յաւիտենականս:

Հ. Վասն քերց մերոց հեռաւորաց:

Պ. Աստուած իմ, փրկեա զաղա-
խայս քո, որ յուսան ի քեզ:

Հ. Տէր, լուր աղօթից իմ:

Պ. Եւ աղաղակ իմ առ քեզ ե-
կեսցէ:

Աղջնէ:

Տէր, կը խնդրենք, երանուհի Մա-
րիմայ միշտ կուսին բարեխօսութեամբն
ամէն հակառակութենէ պաշտպանէ
քու ընտանիքդ, որ բոլոր սրտիւ քու
ոտքդ ինկած է, եւ կը խնդրէ որ քու
գթութեամբդ զինքն իւր թշնամեաց
գարաններէն աղատես: Եմենակարող
մշանչենաւոր Աստուած, որ աշխարհիս
տկարները կ'ընտրես, որպէս զի զօրաւ-
որները խսյատաւակես, չնորհէ գթու-
թեամբ, որ մենք՝ որ աստ երանուհի
Աղնէս կուսին եւ քու Մարտիրոսիդ
յիշատակը կը մեծարենք, անոր պաշտ-
պանութիւնը քու քովի վայելենք:
Տէրամբ մերով Յիսուսի Քրիստոսիւ
Որդւով քով, որ կենդանի է եւ կը
թագաւորէ քեզի հետ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Հ. Ով Մարիամ, յղացեալ առանց
մեղաց:

Պ. Աղաչեա վասն մեր, որ ապաւի-
նիմք ի քեզ:

Հ. Ա. Աղնէս:

Պ. Աղաչեա վասն մեր:

Եթէ հիւանդ Քոյրեր կան, Հայր Հոր
մը եւ Ունչն Քեւ մ'լսելու է:

Հ. Տէր, աւասիկ զոր դուն սիբէիր
հիւանդացեալ է:

Պ. Երթայց եւ կազդուրեցից զնա:

Աղնէս:

Ամենակարոր եւ մշտնջենաւոր Առ-
տուած, յաւիտենական փրկութիւն
հաւատացելոց, լսէ մեղի քու Ա. Ա.
հիւանդ աղախնյոյդ համար, որուն
քու ողորմնածութենէդ գթութիւն
կը հայցենք, որպէս զի առողջա-
նալէն վերջը՝ քեզի Եկեղեցւոյ մէջ
շնորհակալութիւն մատուցանէ: Քրիս-
տոսիւ եւ այլն:

Եթէ հոգեվարք ըլլայ հիւանդը՝ հե-
տեւեալ աղօթքն ընելու է:

Աղնէս:

Տէր, նայէ զթութեամբ քու Ա. Ա.
աղախնյոյդ, որուն մարմինը տկարա-
ցած է հիւանդութեամբ, զօրացուր
անոր հոգին, զոր ստեղծեցիր, որպէս
զի մահուան ժամանն Սուրբ Հրեշտա-
կաց ձեռօք՝ քեզի իւր արարչն ա-
ռանց մեղաց արատոյ ներկայանալու
արժանանայ: Տէրամբ մերով Յիսու-
սիւ Քրիստոսիւ ամէն:

Եթբոր որ եւ իցէ անձ կամ մասնաւոր
գործ մը Բարեպաշտական Միութեան ա-
զօթիցն յանձնուելու հարկ ըլլայ, Հայր
Հոր մը եւ Ունչն Հա կ'լսուի:

Հ. Ով Մարիամ, յղացեալ առանց
մեղաց:

Պ. Աղաչեա վասն մեր, որ ապաւի-
նիմք ի քեզ:

Հ. Սրբուհի Աղնէս:

Պ. Աղաչեա վասն մեր:

Ժողովը կը վերջանայ՝ հետեւեալ ա-
զօթքը ննջեցեալ Քերց եւ Քաւարանի հոգ-
ւոց համար լնելէն ետքը:

Առաջնութեան:

Ի Խորոց կարգացի առ քեզ Տէր,
Տէր լուր ձայնի իմնւմ:

Եղիցին ականջք քո ի լսել զձայն
աղօթից իմոց:

Թէ զանօթէնութիւնս քննես Տէր,
Տէր ո՞ կարէ կալ առաջի քո, զի
ի քէն է քաւութիւն:

Վասն անուանն քո համբերի Տէր,
համբեր անձն իմ բանի քում, յուս
սացաւ անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչեւ յերեւ
կոյ, ի պահէ առաւօտու յուսացաւ
Խարայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում,
եւ ի նմանէ է փրկութիւն, եւ նա
փրկեաց զիարայէլ յամենայն նեղու-
թեանց նորա:

Հ. Զանդիստ յաւիտենական պար-
գեւեա նոցա Տէր:

Պ. Եւ լոյս մշանջենաւոր ծագեսցի
ի նոսա:

Հ. Ի դրանց Դժոխոց,

Պ. Հան, Տէր, զՀանդիս նոցա:

Հ. Զի հանդիցեն ի խաղաղու-
թեան:

Պ. Ամէն:

Հ. Տէր լուր աղօթից իմոց:

Պ. Եւ աղաղակի իմ առ քեզ Եկեսցէ:

Առջնութեան:

Աստուած, գուն որ շնորհաց տուիչն
ես, եւ մարդկան փրկութիւնը կը սի-
րես, կը ինդրենք քու գթութենէդ,
որ երանուհի Մարեմայ միշտ կուսին
եւ քու բոլըր Արբոցդ բարեխօսու-
թեամբն հաճիս մասնակից ընել
մշանջենաւոր երանութեան մեր Միա-
բանութեան Քոյլերը, մեր աղդական-
ներն եւ բարերարները, որոնք իրենց
ժամանակաւոր կեանքը կնքած են:
Տերսիք մերով Յիսուսիւ Քրիստոսիւ
ամէն:

Եթէ վերջին ժողովէն եաբը Մարեմայ
Դուստրներէն մին մեռած ըլլաց, հե-
տեւեալ աղօթքը կ'աւելցուի, զայն վե-
րոյիշեալ աղօթքէն յառաջ դնելով:

Աղջիւն:

Տէր, խոնարհեցուր քու ականջներդ
մեր աղօթից, որով քու ովրմութեա-
նէդ թախանձանօք կը ինդրենք որ
քու աղախնոյդ Ա. Ա. հոգին, որ քու
թոյլտութեամբդ այս աշխարհէս
բաժնուեցաւ, խաղաղութեան եւ լու-
սոյ երլիին եւ քու Սրբոցդ ժառան-
դակից ընես:

Մարեմայ Դուռատրներն իրենց առան-
ձնական եւ հասարակաց աղօթից մէջ
չմոռնան աղօթելու Աստուծոյ իրենց կեն-
դանի եւ ննջեցեալ կրօնակից Քերց հա-
մար, եւ նոյնպէս անոնց համար, որոնք
Աստուծմէ կոռուած են իրենց վլճակակից
ըլլալու:

4. Ամսական ժողովներ:

Ամենայն ինչ շաբաթական ժողովոց
պէս է, բաց անկէ՛ որ Հոգևոյն Որբոյ
աղօթէն ետքը վարիչն հետեւեալը, կը
յաւելու:

Աղջիւն:

Ամենակարող եւ ամենազթած Առ-
տուած, որ այսօր Մարեմայ Անարատ
կուսին Միաբանութիւնը գումարեցիր

քու սուրբ անունդ վիտաւորելու հա-
մար, աղերսանօք կը ինդրենք քեզմէ՛,
որ նոյն երանուշի կուսին, Ա. Ադնէսի
եւ քու բոլոր Սրբոցդ բարեխօսու-
թեամբն հեղուս մեր սրտերուն մէջ
քու Հոգիդ, որ զմեզ քու պատուի-
րանացդ եւ մեր Եղբայրութեան կա-
նոնաց պահպանութեան մէջ հաս-
տառէ եւ աշխարհիս ընդունայնու-
թիւներէն զմեզ միւս պահէ, եւ
զմեզ իւր շնորհաց օգնականութեամբը
փրկութեան նաւահանդիսան հաս-
ցընէ: Տերամբ մերով Յիսուսիւ Քրիս-
տոսիւ: ամէն:

Վարիչը կարծառու խօսակցութիւն
կամ խրատաբանութիւն մը կ'ընէ: յետոյ
գահէրէցը բարձր ձայնիւ հետեւեալը կը
կարդայ:

Աղջիւն վերաբէն նուիրման առ Մարիամ:

Ովանաբատ կոյս Մարիամ, մեր հզօր
վիտաւորանն եւ գորովալից մայրը,
խորանիդ ոսից առջեւն ինկած կը
նորոգենք ամէնքս միատեղ այն ներ-
գործութիւնը, որով ինք զի՞նքնիս

Քու ծառայութեանդ կը նուիրենք
քու ընտանեացդ մէջ մտնելով: Ըն-
դունեէ՝ ով Մարիամ, մեր այս նոր
նուիրումը, զոր ի բոլոր սրակ քեզի
կ'ընենք: Քեզի համար են մեր ամէն
մտածութիւններն եւ յօժարութիւն-
ները, քեզի համար են մեր բոլոր սէրնե
եւ մեր կեանքը:

Ահաւասիկ այժմ ստիցդ առջեւր
խնարհած կը մատուցանենք քեզի
վերստին մեր շնորհակալութիւնը, որ
զմեզ քու Գտաներացդ թուոյն մէջ ըն-
դունեցար, նոյնպէս շնորհակալ ենք
այն ամէն շնորհաց համար զորոնք ըն-
դունեցար անցեալ ամսոյն մեր իւրա-
քանչիւրին եւ բոլոր Բարեպաշտական
Միութեանս համար: Լքացուր, ով ա-
մենազթած Մայր, լրացուր այն գործը,
զոր այնպէս աղէկ սկսար, ընդունէ քու
աստուածային Յիսուս Որդիէդ մեզի
շնորհաք, որ այնչափ սիրոյն եւ այն-
չափ բարեայ հաւատարմաբար համա-
պատասխանենք:

Կներէ մեր յանցանաց եւ բազմաթիւ
անհոգութեանց, բարէ, անհամար են

մեր քեզի գէմ գործած պակասու-
թիւններն, եւ մէկպէտ գիտես մեր
անարժանաւթիւնը, սակայն քու մայ-
րական օրչնութիւններդ միշտ մեր
վրայ կը սփռես: Մեր նուերն եւ մեր
աղօթիւնները պիտի մերժես: Սայդ է
մեր ապերախտութիւնը մեծ է. բայց
մայր մ'իւր գուստըն երբեք մերժած-
է, որ զղացեալ սրտիւ ինք զինքն ա-
նոր գիրկը կը նետէ: Աղէ, եթէ մենք
քու շնորհացդ արժանի չենք, յիշէ,
ով քաղցր Մարիամ, որ գուն ամենա-
զթած կոյս ես, մեղաւորաց ապաս-
տանը, ողորմութեան մայրն եւ մեր
դորովալից Մայրն ես: Մենք որ այժմ
սոքդ իյնալով մասդ եւ ժառանգու-
թիւնդ ենք, կ'ուզենք քաղցր բանու-
թիւն մ'ընել քու մայրական սրտիդ:

Ով Մարիամ, ամենամաքուր ի մէջ
կուսանաց, լոէ այժմ եւ միշտ քու
Գտաներացդ ալաջանաց եւ վիաւառոր
աթոռուցդ բարձրութենէն մայրենի
գորովով հսկէ մեր վրայ եւ զմեզ մեր
ամէնթշնամեացդէմ պաշտպանէ: Քու
անարատ սրտիդ կը յանձնենք մեր

միսիթարութիւններն եւ մեր վշտերը,
մեր երկիւղն եւ մեր յայսերն, եղիք մեր
ուրախութիւնը նեղութեանց մէջ, մեր
խաղաղութիւնը՝ փոթորկաց մէջ, մեր
վահանը՝ պատերազմաց մէջ, մեր խոր-
հըրդականն եւ առաջնորդը՝ մեր ամեն
քայլերան, մեր ապահով ապաստանը՝
կարօսութեանց մէջ: Ազէ, եղիք յա-
մենայնի եւ միշտ մեր Մայրը, եղիք
մեր օգնականը մեր կենաց ընթացից
մէջ, բայց ամէն բանեն աւելի մէր մա-
հուան ժաման զմեզ մի թաղուր, որ-
պէս զի երկրիս վրայ գքեզ մեծարելէն
եւ քեզի հաւատարմութեամբ ծա-
ռայցելէն վերջը՝ ամենքս քու ծայդդ-
մէջ միանալու բախտն ունենանք եւ
քեզի հետ յաւիտենական երանու-
թիւնը վայելէնք. ամէն:

Հ. Ովլ Մարիամ, յլացեալ սուանց
մէջաց:

Պ. Աղաչեա վասն մեր, որ ապաւի-
նիւք ի քեզ:

Հ. Ս. Ազնէս:

Պ. Աղաչեա վասն մեր:

Ճողովը շաբաթականներուն պէս կը
վերջանաց:

Կը սկսի հետեւեալ երգով:

Ե՛կ սուրբ Հոգի ստեղծող Էկց,
Յայց ել մոտաց քոյ ծառայից,
Եւ վերնական շնորհօք քու լից,
Ըզքու ստեղծեալ սիրտ բոլորից:

Միսիթարիչդ ամենայնի,
Եւ Բարձրելոյն պարզեւ բարի,
Ազերիր կենաց հուր կենդանի,
Սէր եւ օծումն իմանալի:

Դու եօթնարկիեան շնորհօք վերին,
Մասն հայրական աջոյ ձեռին,
Դու աւետիք Հօր Բարձրելոյ,
Որ տաս բարբառոս բերանոյ:

Վառեա զիյս ի զգայարանս,
Հեղ զսիրայ քու դհոսանս,
Զտկարութիւն մարմնոյ մերոյ
Միշտ զօրութեամբ քու ամրացն:

Ի բաց վանեա զթշնամութիւն,
Եւ պարգեւեա զիսաղաղութիւն,
Զի քեւ յաւէտ առաջնորդեալ,
Առ ի չարեաց լիցուք զերծեալ:

Տուր ճանաչել մեղ քեւ զհայը,
Եւ զՄիածինն իւր հաւասար,
Եւ յերկոցսնց զհոգիդ բնեալ,
Յամենայն ժամ սերտ հաւատալ:

Փառըք պատիւ Հօր Աստուծոյ,
Եւ Միածնին յարուցելոց,
Հոգւոյն Սրբոյ Միթարչէ,
Այժմ եւ յաւէտ անլոելի. ամէն:

Հ. Առաքես զհոգի քո եւ ստանաս
զնոսա:
Պ. Եւ նորոգես գերեսս երկրի:

Առջեն:

Աստուծ, որ Հոգւոյն Սրբոյ լու-
սաւորութեամբն հաւատացելոց սրտե-
րը լուսաւորեցիր, անով մեղի ուղիղ
բաները ճանչցուր, եւ անոր միսի-
թարութիւնը միշտ վայելենք: Տե-

րամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ.
ամէն:

Հ. Ով Մարիամ, յղացեալ առանց
մեղաց:

Պ. Աղաչեա վասն մեր, որ ապաւ-
ինիմք ի քեզ:

Հ. Ա. Ագնէս:

Պ. Աղաչեա վասն մեր:

Վարիք կ'իմացընէ Մարեմյ Դատերաց՝
այն օգուտն եւ բարիքը, զոր Բարեպաշ-
տական Միութիւնը բարի պաշտօնէից
լնտրութենէն կը շահի, նոյնակս չարիքը
որ ցրուած եւ անհոգ պաշտօնէից լնտրու-
թենէն յառաջ կու գայ:

Ըստքեց անունները կը ծանուցուին
եւ ժողովս հետեւեալ երգով կը վերջա-
ցուի:

Երե:

Օրհնեցէք զՏէր ամենայն աղինք,
օրհնեցէք զնա ամենայն ժողովուրդք:

Զի ողսրմաւթիւն նորա հաստա-
տեալ է ի վերոց մեր, եւ ճշմարտու-
թիւն Տեսան մնայ յաւիտեան:

Փառը Հօր, եւ այլն:

Հ. Օրհնեայուք զհայը եւ զՈրդի,
եւ զԱռըք Հոգին:

Պ. Օրհնեցուք եւ բարձր արաս-
ցուք վնա յաւիտեան:

Հ. Տէր լուր, եւն:

Աղջի+:

Աստուած, սրուն ողօրմութիւնն ան-
չափ է, եւ բարութեան գանձն անրո-
պառ, բարեգութմեծվայելութեանդ
շնորհակալ կ'ըլլանք մեզի տրուած
պարզեւաց համար, եւ միշտ քու-
դթութիւնդ կը հայցենք, որ մեր
խնդրուածքը կատարես, եւ զմեզ յաւի-
տենական վարձուց արժանայրնես։
Տէրամբ մերով Յիսուսի Քրիստոսիւ։

Պ. Ամէն:

6. Ժողովներ, որոնց մէջ Բարեպաշտա-
կան Միութեան գործոց վրայ կը խօսւի

Վարիչը կ'ըսէ։

Հ. Եկ Սուրբ Հոգի, լից լսիրաս
հաւասացելոյ քոյց։

Պ. Եւ վառեա զհուր սիրոյ քո ի
նոսս։

Հ. Տէր ողօրմեաց։

Պ. Քրիստոս ողօրմեաց։

Հ. Տէր ողօրմեաց։

Պ. Հայր մեր, որ յերկինս ես, եւ
այն։

Հ. Յիշեա զմիաբանութիւն քո։

Պ. Զոր ստացար ի սկզբանէ։

Հ. Տէր լուր աղօթից իմոց։

Պ. Եւ աղաղակիմառ քեզ եկեսցէ։

Հ. Խաղաղութիւն ամենեցուն։

Պ. Եւ ընդ հոգւայդ քում։

Աղջի+:

Տէր, լուսաւորեա զմիսս մեր լուսով
պայծառութեան քոյ, զի կարացուք
տեսանել զոր ինչ գործելոց իցեմք,
եւ լիցուք կարող առնել զուղեղն։
Տէրամբ մերով Յիսուսի Քրիստոսիւ։

Պ. Ամէն։

Ողջոն քեզ Մարիամ, լի շնորհօք,
եւ այն։

Հ. Ով Մարիամ, յդացեալ առանց
մեզաց։

Պ. Աղաչեա վասն մեր, որ ապաւի-
նիմք ի քեզ։

Հ. Ա. Աղնէս։

Պ. Աղաչեա վասն մեր։

Ժողովքէն ետքը վարիչը կ'լսէ:
 Պու Տէր ողորմեաց մեզ:
 Պ. Գոհոթիւն Աստուծոյ:
 Հ. Տէր ողորմեաց:
 Պ. Քրիստոս ողորմեաց:
 Հ. Տէր ողորմեաց:
 Պ. Հայր մեր, որ յերկինս ես, եւն:
 Հ. Զօրաց զայս, Տէր զոր հաստա-
 տեցէր ի մեզ:
 Պ. Ի տաճարէ սրբոյ քումմէ, որ
 յերուադէմ:
 Հ. Տէր լուր աղօթից իմոց:
 Պ. Եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ:
 Հ. Խաղաղոթիւն ամենեցուն:
 Պ. Եւ ընդ հոգւց քում:

Աջնկ:

Խնդրեմք ի քէն Տէր, ցոյց ի մեզ
 զմարդասէր օգնականութիւն սրբոյ
 պահպանութեան, զի զոր ինչ ուսուք
 ի քէն առնել, օգնականութեամք քով
 կատարեցուք: Լուր Տէր, աղօթից
 մերոց, եւ խնայեա ի մեզ, որ խոսու-
 վանիմք քեզ զմեղս մեր, զի եթէ
 թշնամնեցաք զքեզ ի Միաբանու-

թեանս յայսմիկ, ընկալցուք թողու-
 թիւն յողորմնութենէ քումմէ: Տե-
 րամք մերով Յիսուսիւ Քրիստոսիւ .
 Պ. Ամէն:

7. Մեկնումն Մարեմայ Դատեր մը Բարե-
 պաշտական Միութենէն:

Ճողովք կը գումարուի ամսական ժո-
 ղովոց համար որոշուած աղօթիքն: Երբոր
 վարիչը Հոգւցն Արքոյ աղօթքն աւարտէ,
 Մարեմայ Դուստրը, որ Բարեպաշտական
 Միութենէն պիտի մեկնի, հետեւեալ
 խոսուամք կ'ընէ:

Խոսուամք հաստարմունեան Յիսուսի Ե-
 պարէմայ Ճառայունեան մէջ:

Հասան ուրեմն ով Մարիամ, իմ ա-
 մենաքաղցր Մայրս, այն այնչափ գաւռն
 օրն, որ զիս այս Բարեպաշտական Ս.
 Միութենէս, եւ այս քու սիրելի
 Գատերաց ընկերութենէն կը հեռա-
 ցընէ: Որովհետեւ հարկը զիս կը ստի-
 պէ, ինք զինքս քու սիրելի Որդւոյդ
 կամացը կը համակերպէմ: Բայց հա-
 ճէ, կը ինդրեմ քեզմէ, ով ամենա-
 գթած կոյս, օգնել ինձի ամէն

վտանդաց մէջ, եւ պահել զիս այն
որսդայթներէն, զորսնք իմ թշնամի-
ներս իմ անփորձութեանս կը լարէն։
Գիտեմ որ մինչեւ ցայժմ հոգւոյս
վրայ հսկեցիր, բայց հիմնյ, ով անձ-
կալի Մայր, մասնաւոր պաշտպանու-
թեան մը հարկաւորութիւն ունիմ։
Աղէ, ըրէ, կ'երդուընցընեմ զքեղ,
ըրէ որ միշտ քեզի արժանաւոր Դատեր
մը կեանքն ունենամ։

Այն, ով ամենամաքուր եւ անա-
րատ կոյս, կը խստանամ ըլլալ հաւա-
տարիմ քու ծառայութեանդ մէջ եւ
փախչել աշխարհիս սկզբունքներէն
եւ ցանկութիւններէն։ Իմ փառքս եւ
երջանկութիւնս պիտի ըլլայ որիշ-
ներն ալ քեզի ծառայեցընել եւ
զքեզ սիրոյընել։ յաճախ քու խորա-
նիդ առջեւը գալով քեզի զօրութիւն
պիտի խնդրեմ, որուն կարօտ եմ ա-
ռաքինութեանց գործադրութեան մէջ
յարատեւելու համար։ Ահաւասիկ,
ով սիրելի Մայր, իմ որոշումներս։
Հաճէ ներկայացընել զանոնք քու
աստուածային սիրելի Որդւոյդ եւ իմ

փրկչիս Յիսուսի։ Ամենասուրբ Երրոր-
դութիւնը զանոնք ալ, զիս ալ հաճի
օրհնել։ Օրհնէ զիս գուն ալ, ով ամե-
նասուրբ կոյս, եւ ինձի հետ այն ա-
մէնքը, որոնք հսս քու անուամբդ-
ժաղոված են, եւ ընդունէ մեզի ամէ-
նուս այն շնորհքը, որ օր մ'ինք զինք-
նիս քեզի հետ սուրբ Դրախտին մէջ
վերասին գտնենք եւ յաւիտեանս քու
գովառութիւններդ երգենք։ ամէն։

Այս աղօթքս երգը՝ գահերէցը խո-
րանին առջեւը կ'երթայ, եւ յանուն ա-
մէնուն Ս. Բենարդոսի Յէլւ ով կոյը
եւ յետոյ Ս. Ագնեսի աղթքը կը կարդայ։

Պահպան+ :

Յիշեա, ով կոյս բաղմագութ, զի ի
յաւիտենից ոչ ոք լուսու, եթէ ի քո
պաշտպանութիւն ոք ապաստան եղեւ,
եւ զքս նպաստաւորութիւն ինդրեաց
եւ հայցեաց զքս օգնականութիւն եւ
լըեալ թողաւ։ Արդ՝ ես պապիսի
յուսով համարձակեալ, առ քեզ ըն-
թացեալ ապաւինիմ, ով կոյս կու-
սանաց, Մայր, առ քեզ գամ, առաջի

քո մեղաւորս հեծութեամբ կամ։ Մի
անտես առներ զաղաչանս իմ, Մայր
Բանին, այլ լուր հաշտութեամբ եւ
ունին դիր ամէն։

Ապէն+ ար Ա. Ագնէս։

Իսկ Դուն, Ա. Ագնէս, որ ես Պաշտ-
պան Մարեմայ Գատերաց, պաշտպանէ
այս մեր Քայրը, օգնէ ասոր իւր կարօ-
տութեանց մէջ, առոր ասոր այն քա-
ջութիւնն եւ զօրութիւնը, որով դուն
արհամարհէլ կրցար զգայարանաց
հրապոյրներն եւ անօրինաց հալա-
ծանքները, եւ ըրէ որ ինք զինքն եր-
կրիս վրայ Աստուծոյ հաւաստարիմ պա-
հելով՝ օր մ'ալ յերկինս վարձատրուե-
լու արժանանայ, ամէն։

Հ. Ով Մարիամ, յդացեալ առանց
մեղաց :

Պ. Աղաչեա վասն մեր, որ ապաւ-
ինիմք ի քեզ։

Հ. Արքուհի Ագնէս։

Պ. Աղաչեա վասն մեր։

Ամէքն ալ նստելէն ետքը՝ վարիչ
կարճաւոտ խրատ մը կու ասյ Բարեպաշ-
տական Արիութենէն մեկնող Դասերն։
Յետոյ ժողովը կը փակուի սովորական
աղօթիւք։

Պ Լ Ո Ւ Խ Գ .

ԿԱՆՈՆՔ ԿԵՆԱՅ, ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐ, ԵՐԳԵՐ

Ա. ԿԵՆՈՆՔ ԿԵՆԱՅ

1. Կանոնքը ամեն օրուան համար:

Ամէն բանէն յառաջ՝ դուք՝ որ եք
Դաստերք անարատ կուսին, ունեցեք
մեծ ջանք մը ձեր հոգին Աստուծոյ
աչաց առջեւը դեղեցիկ եւ մաքուր պա-
հելու, առաքինութիւնը սիրելով եւ
անիժեալ մեղքէն փախչելով։ Այս
կանոններս ստեղ կարդայեք եւ ի
դործ դրէք դաստիք։

2. Առաւոտն արթնալուն պէս զձեղ
խաչակնքել շմունաք, ձեր միտքն
առ Աստուծ վերացուցեք, Անոր
նուիրեցեք ձեր սիրան եւ օրուան

ամէն դործերը, Անոր շնորհակալ ըլ-
լալով՝ որ բոլոր գիշերն իւր պահպա-
նութիւնը ձեզի չէ զլացած։ Դիմեցեք
նոյնագէս ամենասուրբ կուսին, եւ
նուիրեցէք անոր ձեր սիրով, եւ անոր
պատկերին առջեւը՝ զոր ձեր անկողնոյն
քովէն կախած եք, ըսեք հետեւեալ
նուիրանայ ալզօթքը։

Ով կոյս Մարիամ, Մայր Աստուծոյ
եւ իմ Մայրս, քեզի կ'ընծայեմ սիրոս,
կ'ալաշեմ քեզի, ընդունէ զայն, եւ
րուէ զիս քեզի արժանաւոր Գուստը,
հնազանդ, աշխատասէր եւ պարկեշտ,
որպէս զի կարենամ օր մը քեզի հետ
արքայութեան մէջ միանալ ։ ամէն։

3. Պարկեշտաւութեամբ հագուելէն
վերջը՝ անմիջապէս ձեր առաւոտեան
ալզօթքներն ըսեք, որոնք կրնան հա-
մառօտ ըլլուլ, բայց բնաւ զանց մ'ընէք։
Յետոյ յարդարեցէք ձեր անկողինն եւ
ձեր զգեստները։ — Ձեր առաւոտեան
եւ երեկոյեան ալզօթից մէջ երբէք մի
մոռնաք ըսելու երեք Ողջոյն՝ Մա-
րեմայ Ա. կուսին, մաքրութեան հա-
մար, հետեւեալ ոլացականով՝ “Մա-

բիւմ, Ապյօն իմ ամենամաքուր, պահէ
զիս մահացու մեղքէ” :

3. Առաւտօտեան, կէսօրուան եւ երեկյեան ազօթից մէջ՝ զանգակին հէշման ժամանակ ողջունեցէք զՄարիամ Հըբէշտակ Տեառնիւ, կամ երեք Աղջունիւ:

4. Սովորութիւն ըրեւէք ամէն օր՝ գունէ քառորդ մը խաչելութեան առջեւը մտածական ընելու, իսկ եթէ զայն ընելու արգելէք ունենաք, օրուան մէջ յաւիտենական ճշմարտութեանց կամ Յիսուսի Քրիստոսի չարչարանաց վրայ քանի մը խորհրդածութիւններ ըրեւէք, զար կրնաք ընել նաեւ աշխատելու ատեն առանց ձեր գործոց արգելէք ըլլալու։ Այս սովորութիւնս շատ օդականք է, ով որ աղեկ կը մտածէ, աղեկ կ'ապրի:

Ճաշակէ: Ամէն օր ամենասաւըրբ Հաղորդութեան, անարատ կուսին եւ Ս. Ագռաքակի այցելութիւն ըրէք, եթէ եկեղեցից երթաւլ չկարենաք, նայնը ձեր սեհնեկին մէջ ըրէք:

6. Զեր ամէն պարտաւորութեանց
կատարմանը մէջ ճիշդ եղէք, դործք
մը սկսելէն յառաջ ձեր վրայ խաչ
հանեցէք, ի սրտէ սկսելի դործը նոյն-
պէս անոր նեղութթիւնն եւ աշխատու-
թիւնն Աստուծոյ նուիրելով, որպէս
զի յերկինս արգիւնք վասարիկիք:

7. Զանացելք որ օրուան ընթացքին
մէջ միշտ ինք զենքնիդ Աստուծոյ հետ
միացած պահէք, յաճախագոյն սլա-
յական աղօթքնելով, եւ ի մասնաւորի
Առնենենափառ Պաւապայեցւոյնը կրկնե-
լով, “Պուտար, Աստուծած զքեղ կը
տեսնէ՛ : Եյ՞ յիշեցելք որ Աստուծա-
ծձեղ կը տեսնէ եւ ձեր ամեն գործը կը
նշանակէ : Անոր համար ամենայն ինչ
անոր փառաց համար ընելու դիտաւո-
րութիւնը ստէպ նորոգեցէք, եւ այս-
պէսով նոյն իսկ անտարբեր գործերը
կը պրացրնէք :

8. Բարի Դուստր մ'իւր կերակրոյ
ժամանակները պէտք է որոշած ըլլալ.
ժամանակէն դուրս բան չ'ուտեր,
ուտեղու ատենն ոչ շատ շուտ, ոչ շատ
կամաց կը շարժի, շատակերութենէ
եւ անքաղաքաղարական կերպով ու-
տելէ կը զգուշանայ:

9. Իրիկունը ձեր աղօթքներն ըրէք.
Նմանապէս խղճի մտաց կարձառօտ
քննութիւն մ'ըսէք նոյն օրը գործած
պակասութեանց վրայ. ի մանաւորի
տիրող մնլութեան վրայ, խնդրելով
յԱստուծոյ թողութիւն եւ շնորհաք
զանոնք ուղելու:

10. Քնանապու գացած ասենը դուք
զձեղ օրհնած ջրով խաչակնքեցէք, ձեր
զգեստները պարկեշտութեամբ հանե-
ցէք՝ Աստուծոյ եւ պահապան Հրեշ-
տակին ներկայութիւնը մտածելով.
Միանդամյն խորհելով որ թերեւս այն
գիշերը ձեր վերջին գիշերն ըլլայ: Ինք
զինքնիդ Տիրամօր պաշտպանութեան
յանձնեցէք եւ խաչելութիւնն համ-
րութեցէք, պառկեցէք պարկեշտու-
թեամբ եւ քնացէք Յիսուսի ամենա-

սուրբ սրտին մէջ՝ հետեւեալ պացա-
կաննըսելով. «Խաղաղութեամբ հանդ-
չիմ եւ ննջեմ Յիսուսի գեղեցիկ
սրտին մէջ, որ փրկեց զիս:»

2. Կանոնք ամեն շարժու համար:

1. Ութը օրն անդամ մը սուրբ խոր-
հըրդոց մերձենալու բարի սովորու-
թիւնը պահցեցէք կամ ջանացէք
գէթ ամփալ չանցրնել: «Նոյնպէս փոյթ-
ըրէք ձեր Բարեպաշտական Միութեան
մէջ կատարուած հոգեւոր բանակցու-
թեանց ներկայ գտնուելու:

2. Ջանացէք որ շաբաթ օրը պահէք
պահէք, կամ ձեր հոգեւոր Հօրը խոր-
հըրդոյն հետեւելով՝ ուրիշ մեռուցում
մ'ընէք, զՄարիամ մեծարելու հա-
մար, որուն նոյն օրն առանձին եղա-
նակաւ նուիրուած է:

3. Աշխատեցէք որ ամէն տօներուն՝
ժողովրդապետութեան նուիրական
պաշտամանց ներկայ ըլլաք, ի մասնաւ-
որի քարոզի եւ քրիստոնէական վար-
դապետութեան:

3. Կանոնք ամեն ամսոյ համար :

1. Ամսական բանակցութեան կամ ժողովյն միշտ ներկայ դանուեցէք, ընդհանուր Հաղորդութեան միշտ անպակաս եղէք, որ կ'առնուի ամեն ամս Գլխաւոր Բարեպաշտական Միութեան գրուող Մարեմայ բոլոր Դատերաց համար : Եթէ չկարենաք՝ զայն առանձին առեք :

2. Ամեն ամս ջերմեռանդական սովորութիւն մ'առեք, եւ նոյնին ճշգիւհետեցէք, մասնաւորապէս զայն՝ զոր բանակցութեան ժամանակը լսած էք :

3. Ամսոյն առաջին կիրակիին նախորդ շաբաթ օրն հոգեւորական կրթութիւն ըստէք . որ ամսական կը կոչուի. ձեր անցեալ ամիսն ունեցած վարուց վրայ մոտած ելու համար, ձեր խղմին դործելին Աստուծոյ հետ շակեցէք, իբրեւ թէ այն օրն պիտի մեռնէք, կիրակի օրն ամսական խոստավանանքն ընելէն ետեւ Ա. Հաղորդութեան մերձեցէք :

4. Կանոնք ամեն տարուան համար :

1. Բաղձակի էր որ դուք, Դատերք Մարեմայ, ամէն տարի վաղքի մը մէջ հոգեւորական կրթութիւն մ'ընէիք, կամ եթէ անկարելի է, փոխանակ առոր ձեր տանը մէջ ինք զինքնիդ Յ կամ 4 օր առանձնութեան տայիք, ձեր խիղճը ճշգիւհ քննելով եւ յաւիտենական ճշմարտութեանց վրայ մոտածելով, եւ յետոյ ըստ խորհրդոյ ձեր խոստավանահօր՝ տարեկան կամ ընդհանուր խոստավանանք ըլլայիք :

2. Պատրաստուեցէք տօնելու մասնաւոր ջերմեռանդութեամբ Քրիստոսի, Տիրամօր եւ Ա. Աղնէսի գլխաւոր տօները, անոնցմէն յառաջ եռանդնալից ինսօրէքներ ընելով :

3. Կը յանձնուի ձեզի Մարեմայ ամսոյն կրթութիւնն ի պատիւ Թաւդուհայն Երինից :

5. Կանոնք ամեն ժամանակի համար :
ա. Թէ ինչ պէտք է Սնել:

1. Իբրեւ բարի Դուստր տածեցէք ընդ միշտ մասնաւոր ջերմեռանդու-

թիւն մ'առ. ձեր Մայրն Մարիամ. առ
Ս. Աղնէս՝ ձեր Քոյլն, նոյնպէս առ
ձեր պահապան Հրեշտակն:

2. Աշխատութեան սէրն օրիորդի
մը համար միշտ ամենագեղեցիկ օժիտն
եղած է, անոր համար սիրեցէք աշ-
խատութիւնն իբրեւ պարտք ձեր վի-
ճակին:

3. Խոնարհութիւնն է հիմն ամե-
նայն առաքինութեանց. ուստի ձեր
վրայ նուաստ համարում ունեցէք, եւ
գիտնալով որ ամենայն ինչ Աստուծմէ
է, նմանեցէք ամենասուրբ Կուսին, որ
ամենախնարհն եղաւ:

4. Ծնողաց եւ մեծաւորաց հնա-
զանդին գլխաւոր առաքինութիւննե-
րէն մին է, զոր պէտք էք ի գործ գնել,
եւ երբէք պէտք չեք ընել եւ որոշել
բան մ'առանց անոնց խորհրդոյն եւ
հաճութեան:

5. Օրիորդի մ'ամենափառաւոր մար-
դարիտն է՝ պարկեշտութիւնը, ուրեմն
պարկեշտութիւն զգեստոց եւ հայե-
ցուածոց մէջ. պարկեշտութիւն շնչա-
դայութեան ատեն եւ տանը մէջ. մրով

բանիւ այս առաքինութիւնն ձեր վրայ
ամէն տեղ պէտք է փայլել:

6. Օրիորդի մը շատ կը յանձնարա-
րուի ընկերութիւնը, որով միշտ
Աստուծոյ եւ ամէն մարդու հետ հաշտ
կ'ապրի: Ըստ այսմ՝ զգուշացէք ձեր
եղանակը եւ Քերց հետ կուռելէ, ա-
նոնց դառն եւ նախատական խօսքեր
ըսելէ. ամէնուն հետ խաղաղութեամբ
ապրեցէք, զամէնքն Աստուծոյ համար
սիրեցէք, սակայն զգուշացէք մաս-
նաւոր բարեկամութիւններէն:

7. Քաղաքավարութիւնն օրիորդաց
սրտերուն մէջ անկոււած պէտք է ըլլալ.
անոր համար ջանացէք որ մաքրու-
թիւնը ձեր վրայ փայլի, ձեր ամէն
բանն ի կարգի ըլլայ, խօսակցութեան
ժամանակը չափաւոր ըլլաք, շատ բար-
ձրաձայն չխօսիք եւ անսովոր բառեր
չգործածէք:

8. Մեռուցումը սիրեցէք, եւ օր
կամ շաբաթ մ'անցընէք առանց մե-
ռուցման գործ մը գործելու. կամ
գէթ կարեցէք ձեր բերնէն եւ ընդու-
նայնափրութենէն բան մը, որպէս

զի անով աղքատաց ողորմութիւն
ընէք :

9. Եթէ կարելի է հիւանդի մը կամ
վշացելոյ մը ձեր ծնողաց հաւանու-
թեամբն այցելութիւն րուք, ի մաս-
նաւորի եթէ այն անձը ձեր բարե-
պաշտական Միութեան Քոյրերէն մէկն
ըլլայ:

10. Շատ բարեկամներ ունենարէ
գոռչացէք. շատ խոհեմ եւ բարի
համբաւ ունեցող անձինքը ձեզի բա-
րեկամ ունեցէք, անոնց հետ խօսա-
կցելու եւ խորհրդակցելու համար,
բայց միշտ հրամանաւ ձեր ծնողաց եւ
խոսուովանահօրը:

բ. Թէ ինչ բանէ փախչելու է:

1. Ամէն բանէն յառաջ փախիք՝ ով
Գուստոր Մարեմայ, անխոհեմ, չար եւ
անպարկեշտ օրիորդացընկերութենէն.
Եւ գլխաւորաբար այլասեռ անձանց
ընկերութենէն :

2. Հեռացէք կաքաւներէ, փախեք
թատրներէ եւ մարդկան բաղմութե-

նէն, նոյնպէս գէշ վէպերու եւ չար
դրոց ընթերցմանէ:

3. Զարհուրեցէք ստախօսութենէ
եւ ընկերին վրայ չար խօսելէ, շատխօ-
սութենէ եւ շաղակասութենէ հեռու
կցէք. եւ առանց ծանր պատճառի
ոչ խօսուովանահարց, ոչ խոսուովա-
նութեանց վրայ խօսեցէք:

4. Զի պատշաճիր պատմել երաղ-
ները, միբահարութեանց վրայ խօսիլս.
չըլլայ թէ անպարկեշտ երգեր սորվեք
եւ երգեք ընդհակառակն ցանկալի էր
որ հոգեւոր, եւ բարեպաշտական եր-
գեր սորվեիք եւ տանը, կամ արուես-
տանոցաց մէջ երգեիք, փոխանակ
ոյնչափ գէշ երգերու:

5. Բարի օրիորդ մը քաշուածու-
թիւնը կը սիրէ. ուստի գուներուն
առջեւը մի կենաք, պատուհաններէն
մի կարկառիք, եւ առանց ծանր եւ
անհրաժեշտ հարկաւորութեան բնաւ-
տնէն դուրս մ'ելլէք, ոչ առանձին,
ոչ գիշեր ատենը. եւ երբեք՝ առանց
ձեր ծնողաց հրամանին:

6. Փախէք ցուցամնղութենէ եւ

պՃնասակրութենէ, վասն զի սովորաբար այս երկու մնլութիւններն են այնշափ օրիորդաց կործանումը:

7. Փախէք նոյնպէս ծովութենէ եւ գտասրկութենէ, որ կը կոչուի բնդշանրապէս մոյց ամենայն մոլութեանց. ընդհակառակն սիրեցէք աշխատութիւնը, որ է պահապան առաքինութեանց:

8. Աերջապէս զգուշացէք սասարիկ զուարթութենէ, չափաղանց ծիծաղէ, բարձրաձայն աղաղակելէ, փողոցաց մէջ վաղելէ, ետեւը դառնալէ, ձեռուրները թիկանց վրայ գնելէ, ուրիշներուն առջեւը յօրանջելէ, մէկ խօսքով այն ամէն բանէն, որ կը թեալ օրիորդի մը չի պատշաճիր:

9. Փիլիպպոսի երկու խրատները:

1. Դուստրս, ինք զինքդ շատ ջերմեռանդական գործերով մի բեռնասորեր, պէտք ես քիչ բանի ձեռնարկել, բայց անսր մէջն ալ ճշգիւ յարատեւել:

2. Դուստրս, Աստուծոյ սիրայն համար եւ եթէ չես ուզեր քու բոլոր

կենացդ մէջ արտասուել, մտիկ ըրեւ. քու վիճակդ ընտրելու համար մտածէ որ երեք բան պէտք է. ժամանակ, իորն հա- նութ եւ աղջիւ: Ժամանակի յախուռն չգործելու համար: Խորհուրդ՝ ծնողաց եւ խստովանահօր, երբեք քու վրադ չվասահելով: Աերջապէս աղօթք՝ վասն զի ինդիրը ծանրակշիռ գործի մը համար է:

Միսով բանիւ, ով գուստրս, յամենայն դէպս եւ ամէն ատեն զՅիսուս եւ զՄարիամ քու մտացդ, բերնիդ եւ սրտիդ մէջ ունեցիր:

Արտ զայս եւ կեցցես:

Բ. ԲՈՐԵԳԱՑՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

1. ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱՊՕԹՔՆԵՐ

Աղօթիւ սոսուստիւն:

Արթնալուն պէս ըսէք:

Աստուծուծ իմ, Աստուծուծ իմ, ահաւասիկ ինք զինքս քեղի կը նուիրեմ: Տէր, հոգիս պատրաստ է յառ-

նելու, բայց մարմինս տկար է: Ազէ,
օդնէ ինծի եւ եղիր իմ ապաւէնս:

Յիսուս Մարիամ եւ Յովաչի օդ-
նեցէք ինծի: Յանուն Հօր եւ Որդւոյ
եւ Հոգւոյն Արքյ. ամէն:

Յետոյ շուտով անկողնէն ելէք, եւ ա-
մեայն պարկեշտութեամք հագուելով՝
ըսէք:

Սիրելի Յիսուս իմ, բոլոր սրտովս
զքեղ կը պաշտեմ եւ գորովալիր սի-
րով կը սիրեմ զքեղ: — Կոյս Մա-
րիամ Մայր իմ, այսօր հոգիս եւ
մարմինս քեզի կը յանձնեմ: — Ամե-
նասուրբ Կոյս Մարիամ, պահէ զիս
մահուչափ մեղքէ:

Հագուելին վերջը ծունր գրէք, եւ
իբրեւ բարի Գուռար, խնդրեցէք ի Մարե-
մայ իւր մայրական օրհնութիւնը՝ ըսէլով.

Օրհնէ զիս Կոյս Մարիամ, իբրեւ
քու բարեկաշտ զաւակի: Մայր իմ
Յիսուսիս եւ մայր իմ Մարիամ, այսօր
քեզի կու տամ սիրտս, զգածումներս
եւ ինք զինքս ամբողջ, այսօր կ'ուզէմ
բոլորովին քուկդ ըլլալ, պաշտպանէ
զիս իբրեւ քու Գուռասորդ, եւ տուր
ինծի սուրբ օրհնութիւնդ:

Ասկէ ետքը մեծ խոնարհութեամք
Ա. Փրանկիսկոսի Պոռճիայի նմանելով՝ գե-
տինն երեք անգամ համբուլեցէք եւ ըսէք
հետեւեանները:

Ա. ՁԵՐԻ+:

1. Քեզի երկրպագութիւն կ'ընեմ,
ով Աստուած իմ, եւ սրտանց շնոր-
հակալ կ'ըլլամ քեզի այն ամէն բա-
րեաց համար զարոնք ինծի ըրած ես,
ի մասնաւորի զիս այս գիշերս պաշտ-
պանելուդ համար: Կը սիրեմ զքեղ
եւ կը նուիրեմ քեզի իմ այս անար-
ժան սիրսա իբրեւ առաւօտեան զոհ
մր, զոր կը մատուցանեմ քեզի, եւ
կ'ընծայեմ քեզի այսօրսան ամէն
գործերս եւ վշտերս, միայննելով զա-
նոնք Յիսուսի եւ Մարեմայ գործոց եւ
չարչարանաց հետ, նոյնպէս կ'ուզէմ
վասարկիլ. այն ամէն ներսութիւն-
ները, զարոնք իրնամ: Քեզի կը նուի-
րեմ այն ամէն պատարազները, որոնք
այսօր աշխարհիս ամէն կողմերը պիտի
մասուցուին, զանոնք քեզի կը նուի-
րեմ բոլոր մարդկութեան բարւոյն
համար, բայց ի մասնաւորի իմ միա-

բանակից քերցս եւ Քաւարանի հոռուոց համար :

2. Կ'առաջադրեմ, ով Աստուածիմ, քու շնորհքդ փախչել ոչ միայն մեղքէ, այլ նոյն իսկ մեղաց առիթներէն, եւ մասնաւորապէս . . . (հոս անուանեցէք այն մեղքը, որուն մէջ ստէպ կ'իյնաք :) Եւ կը խնդրեմ քեզմէ որ Յիսուսի եւ Մարեմայ սիրոյն համար տաս ինծի ի սպառ սուրբ յարատեւութիւնը : Կ'առաջադրեմ որ վշտաց մէջ քու ամենասուրբ կամացդ համակերպիմ. միշտ ըսելով՝ Տէր քու ամենասուրբ կամքդ ըլլայ :

3. Ով սիրելի Յիսուս իմ, այսօր Բնչպէս կարենամ զքեզ ամենեւին չվշտացընել, ես որ տկար եւ խեղճ արարած մ'եմ : Ես որ քու դառն չարչարանինացդ ամեն յաւերը նորոգելու ենթակայ եմ, այսօր զքեզ Բնչպէս միփարեմ : Ո՛չ, Յիսուս իմ, ինք զի՞նքս քու ամենաքաղցր սրտիդ մէջ կը փակեմ : Այն, այն գեղեցիկ սրտին մէջ՝ որ ինծի համար խոցուած է, կ'ընտրեմ այսօր իմ բնակութիւնս,

անկէ հոսած աստուածային արեան արժանեօքը ինդրելով կատարեալ զղում մը, բաժանումն ալբարածնեւրէն, աղօթից եւ մեռուցման պարզեւն, ընկերութիւնը, սուրբ խոնարհութիւնն եւ հնազանդութիւնը, սէր առ սուրբ խաչն, քու չարչարանինացդ եւ Մարեմայ յաւոց յիշատակը, հաւատոյ, յուայ եւ սիրոյ տճում. քու սրտիդ մէջ քեզի կը յանձնեմ իմ թշնամիներս, մեղաւորները, հերետիկոսներն եւ անհաւատները . քեզի կը յանձնեմ իմ ծնողքս, աղդականներս, բարեկամներս, քեզի կը յանձնեմ ծայրագոյն Քահանայապեար, Եպիսկոպոսները, Աստուծոյ այգևոյն մէջ գործող ամէն մշակները, ժողովուգավետները, մեր վարիչը, իմ հոգեւոր հայրս. այն սրտին մէջ՝ կը յանձնեմ քեզի իմ հոգիս, անմեղները, զղացեալները, հոգեվարներն եւ իմ Քայրերս Մարեմայ բալըր Դուռը արդները : Ով Յիսուս, կ'ուզեմ որ իմ ըրած ամէն բարիկներս ոչ միայն ինծի օդտակար ըլլան, այլ նաեւ քու ամե-

նամաքուր Մօրդ ամէն Դստերացն ալ:
Դուն, ով Յիսուս, օգնէ անոնց իրենց
կարօտութեանց մէջ, վտանգաց մէջ
զանոնք պաշտպանէ, եւ ըրէ որ ա-
մէնքն ալ այսօր եւ ընդ միշտ քու
պաշտելի կարդդ կատարեն, իրենց
պարտաւորութիւնները լնուն, եւ օր
մ'ալ երկնից փառաց համին: Աեր-
ջապէս քեզի կը յանձնեմ Ս. Ե-
կեղեցին եւ բովանդակ աշխարհը,
որպէս զի մէկ փարախ եւ մէկ հովիւ-
րըսց, եւ Քաւարանին ամէն հոգի-
ները:

Յաւիտենական Հայր, քեզի կը
նուրիեմ Յիսուսի Քրիստոսի անդին
արիւն ի քաւութիւն իմ մեղացս,
սուրբ Եկեղեցւոյ պիտոյից համար,
յօդուտ Քաւարանի հոգւոց, իսեղձ
մեղաւորաց գարճին համար, յերետի-
կոսութեանց Ծնչման, Եկեղեցւոյ տա-
րածման եւ քրիստոնեայ իշխանաց
միութեան համար:

Յետոյ բուք Համար Եկեղեցւուր, եւ Հո-
ռոյ, Յուսոյ, Աբրոյ եւ Զովուան ներքութեա-
նեաներն ըրէք, եւ աւելցուցէք:

Յիսուս իմ, այսօր քու ձեռուըներդ
վրաս տարածէ. իսկ դուն՝ Մայր իմ
Մարիամ, ծածկէ զիս քու վերարկուիդ
ներքեւն: Պահապան հրեշտակապաշտ-
պանէ զիս: Արբուհի Ա. Ա. (որուն ա-
նունը կը կըէք) պահպանէ զիս, Ս. Ադ-
նէս, իմ սիրելի Պաշտպանա, եւ գուք՝
Երկնից բոլոր Սուրբերն, օգնեցէք ին-
ձի այսօր իմ ամէն կարօտութեանցս
մէջ:

Հայր մեր, Ողջան քեզ, Փառք Հօր:
Ով ամենամաքուր սիրտ Մարեմայ,
քու սիրոյդ համար կ'առաջազրեմ, որ
այսօր ամեննեւին անվայել խօսք մը
հանութիւն չտամ, օգնէ ինձի որ
զանոնք մերժեմ: Ողջան քեզ:

Ով ամենամաջուր սիրտ Մարեմայ,
քու սիրոյդ համար կ'առաջազրեմ, որ
այսօր ամեննեւին անպարկեշտ գործք
չդուռնեմ. սրբէ, ով ցանկալի Մայր, իմ
այս լեզուս: Ողջան քեզ:

Ով ամենամաքուր սիրտ Մարեմայ,
քու սիրոյդ համար կ'առաջազրեմ, որ
այսօր ամեննեւին անպարկեշտ գործք
չդուռնեմ, տուր ինձի շնորհէք, ով սի-

րելի Մայր, որ իմ ամէն գործոցս մէջ
քու ամենամաքուր սրտիդ հաճաքը
պատճառեմ: Ողջոյն քեզ:

Արջացուցէք ձեր աղօթքներն ըսելով.

Ոիրելի Յիսուս իմ, սիրելի Մայր
իմ, մի թողարք որ այս ձեր Գուստրը
մեկնի ձեզմէ առանց օրհնուելու ձեզմէ,
ձեր օրհնութիւնն իջնայ իմ վրաս եւ
ըլլայ ինծի գրաւական այն փաստըն՝
որուն կը փափաքիմ եւ կը ցանկամ:
Թաղ զիս իբրեւ բարեպաշտ զաւակ՝
օրհնէ Մարիամ Կոյսն:

2. ՄՏՍԾԾԱԿԱՆ

Մոռծուկան ընելու եղանակ:

Ա. Փրանկիսկոս Ապէզացին կ'ըսէ, թէ
մուտորական ագօթքն երեք մասի կը բաժ-
նուի, որնք են՝ պատրաստութիւնն,
մուտք կամ մարմին մուածութեան եւ
վերջ:

1. Պատրաստութիւնն է. ա. Ինք
զինքն Աստուծոյ նէւլպայութեան միշտա-
տակին մէջ պաչել. եւ անոր առջեւը
խոնարհիլ. բ. Պէտք է Աստուծմէ չնորհը
խնդրել մասականը լաւ ընելու եւ անկէ
հոգեւոր օգուտ մը քաղելու համար.

Հ. Մտածելի նիւթը մոտացառջեւը պէտք
է բերել:

2. Մուտքը կամ մուածութեան մար-
մինն է. ա. Իրեն առջեւը գրուած նիւթը
վերստին յիշել՝ զայն մոտք քննելով եւ
իրեն անձին մերձեցնելով. բ. Հաստա-
տուն առաջադրութիւններ եւ որոշում-
ներ ընել:

3. Մուածութեան վերջը. ա. Հնորհա-
կալ ըլլալ Աստուծոյ բարի մուածու-
թեանց եւ մուածականի ատեն ունեցած
լուսաւորութեանց համար. բ. Որշում-
ներն եւ առաջադրութիւններն Աստու-
ծոյ նուիրել. կ. Խնդրել անկէ չնորհք
իւր առաջադրութիւններն ի գործ գնե-
րու, ինդրելով ամենասուրբ Կուսին օգ-
նութիւննել:

Ազնիւ Մոռծուկանէն յառաջ:

Ով Աստուած իմ, առանձինն կեր-
պով հոս քու ներկայութեանդ յի-
շատակը կը զարթուցանեմ մոտայս
մէջ, եւ թէպէտ ի հաւատոց գիտեմ
որ ամէն տեղ ներկայ ես, սակայն
մասնաւորապէս աղօթքը ընողներուն
ներկայ ես: Արդ կը հաւատամ աւելի
վստահութեամբ որ քու ներկայու-
թեանդ առջեւն եմ, քան եթէ զ.քեզ

իմ սեպհական աշուըներովս տեսնէի: Բայց զիս մել կանչեց այս մտածականս ընելու: Դունզիս կոչեցիր, ով իմ բարի Յիսուսս, անոր համար կը ինդրեմ քեզմ որ շնորհօքդ այս մտածականս ամենայն բարեպաշտութեամբ եւ մտադրութեամբ ընեմ: Լուսաւորէ միաքս, սիրաս սուրբ իղձերով վառէ, որպէս զի ասկէ ինձի հարկաւոր եղած պատշները քաղեմ: Ամենասուրբ Կոյս Մարիամ, իմ սիրելի Սայլս, գուն որ աղօթից ուսուցիչն ես, օգնէ ինձի: Ով պահապան Հրեշտակդ իմ, իմ սուրբ փաստաբաններս, անձկալի Ա. Ագնէս, իմ Պաշտպանս, բարեխօսեցէք եւ աղօթեցէք ինձի համար:

Աղջիւ Առ-Ճ-Շ-Ն-Է-Ն- Ե-Պ-Շ-:

Տէր, շնորհակալ կ'ըլլամ քեզի այն լուսաւորութեանց եւ որոշմանց համար, զորմնք ինձի այս մտածականիս մէջ աղդեցիր, թալութիւն կը ինդրեմ, քեզմ բոլոր մեղքերուս, եւ ի մասնաւորի այս կարճառօտ աղօթիցս աւեն ունեցած մտաց յըմանցս համար:

Ով Աստուած իմ, դուն որ ինձի քու կամքդ ձանչոցցիր, տուր ինձի այժմ շնորհէք եւ զօրութիւն զայն լիովին կատարելու: քեզի կը նուիրեմ բոլոր առաջադրութիւններս, եւ քու օգնականութեանդ վրայ վստահացած կ'առաջադրեմ զանոնք հաւատարմաբար ի գործ զնելու, որպէս զի քեզի հաճոյ ըլլամ եւ արքայութեան համար արդիւնք վաստիկիմ:

Ամենասուրբ Կոյս, իմ սիրելի Սայլս, իմ պահապան Հրեշտակս, իմ սուրբ Պաշտպաններս եւ գուն ամենաքաղցր Ա: Ագնէս, օգնեցէք ինձի, որպէս զի բոլոր օրը սրբութեամբ անցընելով կարենամ յաւիտեանս երկնից մէջ ձեզի չետ միանալ, ամէն:

3. ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Արքանէ մնչեւ Ա-Ե-Ր-Ա-Ն-Ը:

Կաստեցէք, ով Դստերք Սարեմաց, Յիսուսի սիրալ, որ կ'աղօթէ եւ կը հառաջէ:

Դուն կ'աղօթես, կը հեծես, ով քաղցր փրկիչ իմ, քու սիրտդ վշտաց

եւ ցաւոց մէջ ընկղմած է: Ո՞չ, որչափ
 հեծելու պատճառներ ունիս... Ա-
 չացդ առջեւն եղած ամենայն ինչը
 սիրադ կը վշտացընէ եւ գառնութեան
 ծովու մը մէջ կ'ընկղմէ: Աշխարհիս
 ողբալի վիճակը, մեղքերը, այն ան-
 կարդութիւնները, որոնց մարդիկ ի-
 րենք զիրենք տուած են. անօրէնու-
 թեանց հեղեղը, որ երկիրը կ'ողողէ,
 այնչափ հոգիները, որոնք կը կրտսուին
 եւ ամէն օր ի գժոխս կը գահավիժին,
 երինաւոր Զօրդ փառքը կ'անարգուի,
 քու չարչարանքներդ եւ ցաւերդ կը
 նորոգուին, արեանդ հեղումն այնչափ
 մեղաւորաց համար անօգուտ կ'ըլլայ,
 որոնց համար թէպէտ եւ մեռար, սա-
 կայն զքեղ անդադար կը վշտացընեն
 եւ յաւիտեանս կը կրտսուին: Ո՞չ, այս
 ցաւալի առարկաներս քեզի համար
 հառաջանաց եւ հեծեծանաց ազբիւր
 են: Ես ալ, ովք բարի Յիսուս, ես իսկ
 քու չարչարանայդ նորանոր պատ-
 ճառներ կու տամ, գուն իմ վրաս կը
 հեծես, իմ հոգւոյս խեղճ վիճակը,
 իմ ծուլութիւններս, անհաւատար-

մութիւնս եւ քու շնորհացդ դիմա-
 դրութիւնս, իմ մեղացս վրայ ունեցած
 չնչին ցաւս, ինք զինքս ուղղելու հա-
 մար ունեցած ոչինչ չանքս, այն
 վտանգը, որուն մէջ ինք զինքս կը
 դնեմ այսողբալի դրիցս մէջ մեռնելու,
 կը տեսնես, կը հեծես, կը հառաջես եւ
 ես չեմ շարժիր, գուն կը վշտանաս եւ
 ես անզգայ եմ: Ես իմ կեանքս հա-
 ռաջանաց արտասուտաց մէջ անցընելու
 էի, եւ ընդհակառակն իմ սիրսս ինք
 զինքը զուարձութեանց եւ ցրուածու-
 թեանց կու տայ: Գուն կ'աղօթես,
 իսկ ես չեմ աղօթեր. կամ եթէ ա-
 ղօթեմ, այնչափ գէշ կ'աղօթեմ, որ
 իմ աղօթքս քու ողորմութեանդ ա-
 թոսոյն առջեւն ելլելու արժանի չըլ-
 լար: Ով Աստուած իմ, ինձի աղօթել
 սորվեցուր. ըսէ որ իմ աղօթքս քու
 առջեւդ ընդունելի ըլլայ: Կ'աղօթեմ
 քեզի այն ամէնուն համար, որոնց հա-
 մար աղօթելու պարտական եմ. իմ
 ծնողացս, բարեկամացս, իմ ամէն բա-
 րերարացս եւ իմ թշնամեացս համար:
 Կ'աղաջեմ քեզի Եկեղեցւոյ՝ իմ գո-

ըսվալից Մօրս, ծայրագոյն քահանայապետին, Եպիսկոպոսաց, Հոգւոց Հովիւներուն, ժողովրդապետին եւ Հոգեեւոր Հօրս, ամէն քրիստոնեայ իշտխոնաց Համար. Նոյնպէս կ'աղաչեմ քեզի ամէն վարչաց եւ քերց Համար, որոնք Գլխաւոր Եղբայրութեան անդամ գրուած են, եւ քու Ագնես աղախնցի գերեզմանին վրայ կը Հանդշին: Հեղ քու առաս օր Հնութիւններդ ամէնուն վրայ, տուր ամէնուն քու սրտիդ նման սիրտ մը, եւ միացուր զանոնք մի եւ նոյն զգած մամբ:

Ա-Ե-Պ-Ր-Ա-Ն-Է- Թ-Ի-Լ- Ք-Ե-Ր-Ա-Յ-Ռ-Ե-Ը:

Նկատեցէք Յիսուսի խոնարհ սրբար:

Բարեկ, որչափ դառնութեան մէջ ընկղմած է սիրադ, ալ քայլը Փրկիչի իմ: Խոնարհեցուցման որպիսի հեղղներով ողովրւած է սիրոտ: Դատաստանարանէ դատաստանարան տարուեցար, այսինքն խայտառակութենէ ի խայտառակութիւն, քեզի թշնամի եղած դատաւորաց առջեւը

դերւոյ պէս սասատիկ եղանակաւ կապուեցար, ամբաստանուեցար իբրեւ յանցաւոր, դատուեցար, դատապարտուեցար իբրեւ չարագործ, մոլորեցուցիչ եւ խոռվարար Հասարակաց խաղաղութեան: Կայիսափային պալատն անձնագով ամբոխէն անարգուեցար, նախատուեցար եւ թշնամանուեցար, որոնք քեզի հետ ամենաանարժեան եղանակաւ վարուեցան: — Աննային քովին ապատակուծ եղար. — Հերովդէսին առջեւն սպիտակ զգեստով ծածկուեցար, ի նշանակ խայտառակութեան, ապաւշ եւ յիմար Համարուեցար: — Պիգատասի ատենին մէջ վաստանուն չարագործի մը հետ Համեմատուեցար, եւ անոր քեզմէ նախադաս Համարուելուն վրայ ցաւեցար: Երուսաղէմի փողոցներէն քաշիտուելով տարուեցար, բազմաթիւ խառնիճաղնձին նախատինքներն եւ Հայ-Հոյութիւնները կրեցիր, որ քու վրադանէծքներ կը թափէր:

Ով պաշտելի փրկիչ, սրտիդ այս զոհս Հարկաւոր էր աստաւածային

Հօրդ փառաց թշնամանքը բառնալու
եւ մեր ամբարտաւանութիւնը խոնար-
հեցնելու համար։ Կոյն իսկ այժմ մեր
խորանաց վրայ՝ առ մեղ ունեցած
սէրդ գքեղ ինչպիսի՞ վիճակի մէջ
կը դնէ։

Թէ պէտ այսպիսի շարժիչ օրինակ
մ'ունինք, սակայն հպարտութիւնն ի
մեղ կը սիրէ։ Անգադար մարդկան
մեծարանքն եւ համարումը միայն կը
փնտուեմ, իբրեւ թէ քուկինդ ինձի
չըսւէր։ Բան մը չեմ կրնար կրել,
մէկու մը չեմ կրնար համբերել քու
սիրոյդ համար, որ ինձի համար ամէն
բանի հանդուրեցիր. ամենափաքր
խոնարհեցուցումը զիս կը նեղէ եւ կը
վհատեցընէ . . . Այս քեզի աշակերտ
ըլլալ է։ Ուրեմն գուն առանձին խո-
նարհութեան բաժակը պիտի ըմպես։
Ոչ, իմ սիրելի վարդապետս, ես զայն
քեզի հետ պիտի բաժնեմ, զայն քու
ձեռքէդ պիտի ընդունիմ, քու խո-
նարհութեանդ մասնակից պիտի ըլ-
լամ։

Վէրաց մանէն մնալու հաշուիւն։

Կաստեցէք Յիսուսի սիրտը, որ կը չար-
չարուի եւ խաչն վրայ կը մեռնի։

Ո՛վ Յիսուս իմ, սիրտ անշափ
խոնարհութեան ենթարկելէն ետեւ,
մարմինդ ալ այժմ ցաւոց սասակու-
թեան յանձնեցիր։ Ինչպիսի՞ վիճակի
մէջ կը տեսնեմ գքեղ դառն ձաղկ-
մանդ ատենը։ Սեան կապուած անգը-
թաբար ձաղկուեցար, կուսական մար-
մնոյդ վրայ ծանր հարուածներ իջան,
մարմինդ տժգունեցաւ, պատուտեցաւ
եւ վէրբերով ծածկուեցաւ։ Որդան
մը պէս երկրի վրայ արինաթաթաւ
ինկար, արեանդ հեղեղներուն մէջ կը
լողայիր։ Բայց քու մարմնոյդ կրած
չարչարանաց սասակութեան մէջ, ով
սիրելի Յիսուս իմ, քու գեղեցիկ
սիրտ ինչ զգածումներ ունեցաւ։
Համբերութեամբ չարչարուեցար, եւ
ինք զինքդ երկնաւոր հօրդ որոշմանցն
ենթարկեցիր, անոր նուիրեցիր քու
չարչարանքներդ, իրմէ մեր մեղաց
համար թողութիւն ինդրեցիր, ինք

զինքդ մեր փրկութեան համար զոհ
ըրիր :

Ով երկրպատելի սիրտ, դուն ամեւ-
նայն ինչ ինծի համար կրեցիր, եւ ես
քեզի համար բան մը կրել չուղեմ:
Ամենաթեթեւ վիշտն ինծի համար
անտանելի չարչարանք մըն է. եւ վլափ
եւ ցաւի անունն անգամ լսելու կը
վախնամ: Ո՞չ, Տէր, չեմ տեսներ որ
վլաերէն փախչելով քու չարչարանք-
ներդ կ'աւելցընեմ, եւ զանոնք իմ
փրկութեանս համար անօգուտ կ'ը-
նեմ: Այս անգութ ձաղկմանս տաենը
կրածդ՝ քու չարչարանացդ սկզբնաւ-
որութիւնն է միայն: Կը տեսնեմ որ
խաչափայտիւ բեռնաւորուած դէպի ի
Գողդոթա կ'երթաս, հրաման տուր
ինծի որ հոգւով քեզի հետեւիմ եւ
քու արիւնալից հետոցդ վրայէն քա-
լեմ: Ի՞նչ կը տեսնեմ, ով Աստուած:
Հաւատքն ինծի ի՞նչ զարմանալի տե-
սարան կը ներկայացնէ: Աստուած մը
չարչարուի՛... Աստուած մը մեռնի տ-
նոնց սիրոյն համար, որոնք զինքը կը
մեռցընեն...: Բարէ: Այս տեսարա-

նիս ի՞նչ կընամ ըսել, իմ զգածում
ներս բացատրելու համար, որոնցմով
սիրտս յազեալ է:

Ո՞չ, որպիսի՞ ճարտարախօսութեամբ
կը քարոզես մեզի այս խաչիս այն
բարձր ճշմարտութիւններն, զորոնք
մեզի աւետեցիր: Ի՞նչպէս լսու կը
ճանչցընես մեզի Աստուածոյ անողոքելի
արդարութեան մեծ ութիւնը, մեր հո-
գիներուն ազնուութիւնն եւ յարգը:
Բայց ամեն բանէն աւելի որշափի կեն-
դանի կերպով մեզի կը ճանչցընես մե-
զայց զարդութիւնն եւ ծանրութիւնը,
տանջանաց խատութիւնն եւ սասակու-
թիւնը, որոնք մեղաւորաց համար
յաւիտենականութեան մէջ պատրաս-
տուած են: Իմ մեղայց վրայ, այն,
իմ մեղայց վրայ է, ով սիրտ Յիսու-
սիս, որ խաչին վրայ կու լսու եւ զա-
նոնք կ'ատես: Իմ մեղքերս զքեզ այս
կէտիս հասցուցին... զքեզ խաչին
վրայ գամեցին... աղիւնդ թափեցին...
քու մահուանդ պատճառ եղան...:

Քու սիրտ, իմ սիրելի փեսաս,
քու սիրտդ ինծի տակաւին խաչին

վրայ բայ է . . . : Քու բազուկներդ տա-
կաւին տարածուած են զիս սիլով եւ
գորովով լնդունելու համար, բաւա-
կան որ անկերծութեամբ եւ ցաւով
քեզի դառնամ: Արդ ահաւասիկ հոս
եմ, գուն անձամբ պատրաստէ զահը,
զայն քեզի արժանի լնելու համար,
որպէս զի մատուցուելու յարմարը լլայ:

Ճաշակման ատենը՝ գուն ալ հոգեւո-
րապէս հաղորդուէ:

Հ ա շ ա ր դ ո ւ թ ի ւ ն է ն մ ն է ս ո ւ ս ո ւ թ ի ւ ն
Ք է ր ջ ը :

Նկատեցէք Յիսուսի սիրտը՝ գերեզմանին
մէջ թաղուած:

Վերջապէս, ով ցանկալի Յիսուս
իմ, մարմինդ թաղուեցաւ . . . : Այս՝
մարդկային թշուառութեանց ամէնէն
սաստիկն է, որուն ինք զինքդ ենթար-
կեցիր այս աշխարհիս վլայ . . . : Հարկ
էր որ խոնարհեցուցումներն եւ ցաւերը
մինչեւ գերեզմանը, քեզի լնկ'րանային:
Ինչպիսի վիճակ, որպիսի խոնարհեցու-
ցում Աստուծոյ համար: Աշխարհիս
վրայ դանուիլ եւ չըլլալու հաւասար

րլլալ, երկրիս ծոցոյն մէջ ծածկուած,
մահուան ստուերաւը շըջապատուած,
ամէն բանէն մերկացած: Կայն իսկ այն
գերեզմանը, յորում կը հանգչի, ի-
րենը չէ: Բայց այս մահուան բնակա-
րանիս մէջ՝ իրեն հետ տարած է եւ
կը պահէ իւր ամէն առաքինութիւն-
ներն, իւր համակամութիւնը, իւր
հպատակութիւնն յաւիտենական հօրը
հրամաններուն, իւր բացարձակ անջա-
տումն յաշխարհէ, իւր բոլորանուէր
անձնանութիւնն առ նախակինա-
մութիւնն, եւ իւր սերտ միութիւնն
Աստուծոյ հետ:

Այս մէծ օրինակ մըն է, որ մեզի
կ'ընծայուի ի նմանութիւն: Այս, ով
սիրելի Յիսուս իմ, գերեզմանդ պիտի
իշնամ՝ քու պաշտելի սրափդ զգա-
ծումներն, երկրաւոր իրերէ անջա-
տումդ սորվելու, հօն պիտի սորվեմ
մեսնիլ աշխարհի եւ ինծի համար,
սիրել քաշուածութիւնը, ներքին ա-
ռանձնութիւնը, Աստուծոյ հետ սերտ
միութիւնն, որ իմ բոլոր երջանկու-
թիւնս պիտի ըլլայ: Ասմէք են, ով բարի

Յիսուս, իմ սրտիս գգածումները, կը նորդեմ զայնք այս զոհիս ատենն եւ քուկիններուդ հետ կը միացընեմ:

Ով պաշտելի սիրտ իմ Փրկչիս, գուն միշտ խնարհեցուցման, վշտաց եւ յաւոց մէջ պիտի չմնաս, այնչափ պատերազմներէն ետեւ, քեզի վառաւոր վիճակ մը սահմանուած էր յերկինս, երկնաւոր հօրդաջկողմընստած՝ սիրտ կ'ընդունի իւր աշխատութեանց արդար վարձքը, կը լուզայ ուրախութեանց հեղեղներուն մէջ, եւ կը վայելէ բուն իսկ Աստուծոյ երանութինը: Սիրտ իմ Յիսուսիս, քու վառացդ եւ յաղթութեանդ վլայ կ'ուրախանամ: Օր մը ես ալ վառացդ եւ երանութեանդ մասնակից պիտի ըլլամ: Միսյն քեզմով եւ արժանեօբդ կընամ զաննք յուսալ եւ անոնց արժանանալ:

4. ԱՊՕԹԱՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Տէր իմ եւ Աստուծուած իմ, կ'երկրս պազեմ քեզի եւ զքեզ կը պատուեմ. քեզի շնորհակալ կ'ըլլամ մինչեւ այս-

օր ինծի ըրած անթիւ բարեացդ համար:

Ամենասուրբ Կյա Մարիամ, Երանելի երկնաքաղաքացիք, եւ իմ սիրելի Պատուանս Ս. Աղնէս, գովեցէք, օրհնեցէք եւ վառաբանեցէք իմ տեղս ամէն բարեաց գերազանց Տուիչք:

Սուրբ Հոգի, տուր մտացա՛ լյոս, եւ կամաց զօրութիւն, որպէս զի ճանշնամ եւ տաեմ այսօր գործած յանցանքներս, եւ ինք զինքս ճշմարտապէս ուղղեմ:

Գննեցէք ձեր իիդն եւ յետոյ ըսէք.

Ով ամենազթած Կյա, ահաւասիկ ստիգմ առջեւն ինկած՝ ես ապէրախտ եւ անհաւատարիմ Դուստրդ, օրս լաւ գործածած չըլլալով՝ այժմ քու առջեւդ՝ յանցանքներս կը խստովանիմ թողութիւն ընդունելու համար: Առանց ջերմեռանդութեան ալօթեցի, ընդունայն խորհուրդներ ունեցայ, յանդուդն գատաստաններ ըլի, սրտիս եւ աշացս գգուշութիւն չըրի, որով ամէն բանի մէջ մոլորեցան: Ընդու-

նայնութիւնը սրբութենէն եւ ծանրութենէն նախամեծար ընտրեցի, իմ անձնական շահէրուս սաստիկ յարեցայ: Զուարժութեանց, զբօսանաց եւ կերակրոց սաստիկ սէր ունեցայ, առջօթից եւ վարդարանի ատենը ցրուեցայ: Իմ միտութեանցս հետեւեցայ, բարկութեան եւ նախանձու տեղի տուի: Բարէ, որչափ զանցառութեան մեղքեր, որոնք զիս կը զարհուրեցը նեն: Ծնողացս եւ մեծերուս նկատմամբ շատ քիչ մեծարանք ունեցայ, հաւասարներուս հետ սակաւ քաղցրութեամբ վարուեցայ, աւելի զիս՝ քանթէ Աստուծոյ փառքը փնտուեցի: Ովսիրելի Մայր, ինչպէս պիտի կարենամ այսափ մեղաց հատուցում ընել: Աղբութիւնի, գուն որ Աստուծոյ քովը մեծ զօրութիւն ունիս, ինդիչ ինձի համար ձմարիտ զղջում մը եւ փրկարար թռողութիւն: Քու բարեխօսութեանդ առաւինած, ով Մարիամ, կ'ողջունեմ զքել ըսելով:

Սուրբ եւ անարատ Յղութեանդ համար, ով Մարիամ, այս գիշերս

սիրոս եւ հոգիս պաշտպանէ: Ողջոյն քեզ Մարիամ եւ այն:

Սուրբ եւ անարատ եւ այն, ըստ վերնոյն:

Սուրբ եւ անարատ, եւ այն:

Մարիամ, իմ ամենաքուր Մայրս, պահէ զիս մահուչափ մեղքէն:

Ով Տիրուհիդ իմ, ով Մայր իմ, ինք զինքս բոլորովին քեզի կը նուիրեմ: Քեզի չերմեւանդն Գուստրդ ըլլալս ցուցընելու համար, այս վայրկենէս սկսեալ՝ կ'ընծայեմ աշուշներս, ականջներս, շոթունքներս, սիրոս եւ բոլոր անձու: Արդ ով Մարիամ, որովհետեւ ես բոլորովին քուկդ եմ, պահէ զիս, պաշտպանէ զիս իբրեւ քու ինչքդ եւ ստացուածքդ:

Համար իունի թոշունիւն:

